Ազգ
AZG
armenian newspaper

Դեկտեմբեր 28, 1991
Շաբաթ
Եռօրեայ թերթ,
Ա տարի, թիւ 91
գինը՝ 30 կ.

դասիչ՝ 69149
հասցէն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243266 SULA SU

Հայաստանը գազի դիմաց կվճարի համաշխարհային գներով

Երեւան, 27 դեկտեմբերի. Սնարք: Հայաստանի եւ Թուրքմենստանի միջեւ կնքվել է պայմանագիր 1992 թ. առեւտրա-տնտեսական համագործակցության վերաբերյալ:

Ինքնիշխան հանրապետությունները պայմանավորվեցին փոխհարաբերություններ հաստատել իրավահավասարության եւ փոխշահավետության հիման վրա: Համաձայն պայմանավորվածության, հորիզոնական կապեր կհաստատվեն ձեռնարկությունների, կազմակերպությունների, հաստատությունների, տնտեսական կառավարման տարածքային եւ այլ մարմինների միջեւ:

Գալիք տարվանից սկսած Հայաստանը համաշխարհային գներով Թուրքմենստանից կգնի գազ, տեխնիկական յուղ եւ այլ ապրանքներ: Փոխարենը կտրվեն «ԵրԱԶ» ավտոմեքենաներ, էլեկտրատեխնիկական սարքեր, կահույք, ավտոսառնարաններ: 1992 թ. ապրանքափոխանակությունը կկազմի ավելի քան մեկ միլիարդ ռուբլի: ■

Հայաստանը կանդամակցի ՄԱԿ-ին մյուս՝ հանրապետությունների հետ

Երեկ Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Արման Նավասարդյանը Ռումինիա կատարած պաշտոնական այցից հետո ընդունեց *«Հայաստանի հանրապետություն»*, *«Ազգ»* եւ *«Երկիր»* թերթերի թղթակիցներին: Հարցումների հիմնական թեման վերաբերում էր Հայաստանի անկախության ճանաչման մեխանիզմին եւ դրա հետ կապված խնդիրներին:

«Ռումինիան թերեւս առաջին երկիրն էր, որ եւ՛ ճանաչեց, եւ՛ ստորագրեց դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագիրը: Արդեն ճանաչել են մոտ երկու տասնյակ պետություններ՝ Լիտվան, Վրաստանը, Ղազախստանը, Ուկրաինան, Ռումինիան, Ռուսաստանը, Աֆղանստանը, Կոստա Ռիկան, Բուլղարիան, Մոնղոլիան, Շվեյցարիան, Թուրքիան, ԱՄՆ-ն, Եգիպտոսը, Թունիսը, Արգենտինան, Կանադան, Կուբան, Լիբիան: Այդ ընթացքը նույնպես շղթայական բնույթ է ըստացել», ասաց փոխնախարարը:

Խոսելով Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին, փոխնախարարն ասաց. «Դեռ դեկտեմբերի 9-ին, երբ Մոսկվայում հանդիպեցինք ԱՄՆ-ի պատվիրակության եւ դեսպանատան ներկայացուցիչներին, դրվեց Հայաստանում Գլխավոր հյուպատոսություն բացելու հարցը եւ պայմանավորվեցինք, որ հունվարի 10-ին նրանք կայցելեն Հայաստան: Այժմ նոր ընկերակցության եւ Հայաստանի անկախության ճանաչումից հետո, կարծարծվի ոչ թե հյուպատոսության, այլ դեսպանատան բացելու հարցը: Այն ժամանակ նրանք ասացին, որ ողջ շրջանում ԱՄՆ-ը հյուպատոսություն կբացի միայն Երեւանում: Անգամ նշվեց, որ եթե տեխնիկական հարցերը լուծվեն, ապա երկու ամիս անց Հայաստանում կարող ենք տեսնել ամերիկյան դրոշը: Դա ամերիկյան կողմի որոշումն էր եւ ըստ ԱՄՆ-ի օրենսդրության ոչ մի այլ երկիր չի կարող բացել հյուպատոսություն այն դեպքում, երբ Վաշինգտոնում չունի իր դիվանագիտական ներկայացուցիչը: Երբ նրանք հայտարարեցին, թե միայն Հայաստանում հյուպատոսություն կլինի, Ադրբեջանի ներկայացուցիչները բողոքեցին՝ պատճառաբանելով երկու հանրապետությունների միջեւ եղած դժվարությունները, սակայն որոշումը գալիս էր ԱՄՆ-ից եւ պատճառաբանվում էր, որ Հայաստանը դիտվում է որպես Անդրկովկասում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների պաշտպանության պատվար: Ռումինները էլ հայտարարեցին, թե դեսպանատուն պետք է բացեն միայն Հայաստանում, որը հավատարմագրված կլինի սպասարկելու Կովկասին: Այստեղ շատ բան կախված կլինի նաեւ մեզանից, թե մենք ինչպիսի պայմաններ կստեղծենք դիվանագետների, դեսպանատների աշխատանքի համար: Մենք պատրաստ չենք նաեւ օրենսդրական առումով: Չկան օրենքներ օտարերկրյա դեսպանատների եւ ներկայացուցիչների մասին, թե ի՞նչ իրավաբանական իրավունքներ ու պարտականություններ պիտի ունենան նրանք: Արդեն պատրաստված են արտասահմանում Հայաստանի դիվանագիտական կարգավիճակի մասին, ՀՀ դիվանագիտական աստիճանների մասին եւ ՀՀ դիվանագիտական անձնագրի մասին նախագծերը: Իրադարձություններն այնքան արագ են զարգանում, որ մեր օրենսդրական քայլերը հետ են մնում: Առ այսօր արտաքին գործերի նախարարությունն աշխատում է առանց կարգավիճակի: Մեզ մոտ չկա դիվանագիտական ծառայություն, որի ստեղծումն, իհարկե, շատ մեծ դժվարությունների հետ է կապված: Անկախ սուբյեկտ լինելը թանկ հաճույք է: Դրա համար պահանջվում են մեծ ֆինանսներ: Օրինակ, Ֆրանսիան այդ նպատակների համար ծախսում է իր բյուջեի մեկ տոկոսը, Բրիտանիան՝ երկու տոկոսը, Շվեյցարիան՝ 4,4 տոկոսը, Իտալիան՝ 8,5 տոկոսը: Ուստի լավ կլիներ, որ արտաքին գործերի նախարարությունը կարողանար իր ծախսերի մի մասը ինքնուրույն ծածկել: Դրա համար իմ կարծիքով ավելի ճիշտ կլիներ արտաքին տնտեսական կապերի նախարարությունը մտցնել մեր նախարարության իրավասության տակ, եւ ոչ թե էկոնոմիկայի պետական կոմիտեի, որտեղ այն կարող է ուղղակի տարալուծվել: Օրինակ, Ռումինիայում այցելելով Կոնստանցա քաղաքը, մենք պայմանավորվեցինք այնտեղ բացել հյուպատոսություն, ինչը կօգնի արագացնելու առեւտրական կապերը, որի հետ են կապված նաեւ տրանսպորտի նախարարության կողմից ներկայացված առաջարկությունները»:

Անդրադառնալով ՄԱԿ-ում Հայաստանի անդամության հարցին, պրն. Նավասարդյանը նշեց, որ այն ընթացքի մեջ է, եւ կլուծվի ոչ միայն մեր, այլեւ բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների համար: Այդ հարցում վճռորոշ դեր կունենա նաեւ Ռուսաստանը: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանում Թուրքիայի հյուպատոսության բացմանը, ապա այն նույնպես կարեւոր նշանակություն կունենա տուրիստական եւ առեւտրական հարաբերությունների զարգացման համար: Առայժմ, ժամկետների մասին պայմանավորվածություն չկա:

Հ. ՍԱՍՏՐՅԱՆ

Ամերիկյան հինգ նոր դեսպանատներ. այդ թվում՝ Երեւանում

Չորեքշաբթի օրը, ինչպես նախատեսել էր «Ազգ»-ը նույն օրն առավոտյան լույս տեսած իր համարում, Մ. Նահանգները ճանաչեց Հայաստանի անկախ պետությունը՝ նախկին խորհրդային 5 ուրիշ հանրապետությունների կողքին, եւ այնժամ պետքարտուղարությունում սկսվեց աշխույժ քննարկում այդ վեց հանրապետություններում դեսպանատներ հաստատելու, դեսպան եւ դիվանագիտական անձնակազմ նշանակելու ուղղությամբ:

Առաջիկա տարվա սկզբում արդեն Վաշինգտոնը մտադիր է Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան, Հայաստան եւ Ղրղզստան ուղարկել ուսումնասիրող խմբեր, ծանոթանալու համար տվյալ հանրապետությունների հնարավորություններին՝ շենքային պայմաններին, հաղորդակցության եւ այլ հարմարություններին: Այդ իմաստով որեւէ դժվարություն չի ներկայացնի Ռուսաստանը, քանի որ Մոսկվայում գտնվող ԱՄՆ-ի դեսպանությունը լրացնում է բոլոր պայմանները, մինչ նախկին ԽՍՀՄ-ում ամերիկյան դեսպան Ռ. Շտրաուսն իր երկիրը կներկայացնի Ռուսաստանում: Համեմատաբար բարդություն չի ներկայացնի նաեւ Ուկրաինան, որտեղ ԱՄՆ-ը արդեն ուներ գործող հյուպատոսություն:

Պարագան ուրիշ է Տաշքենդում, Բիշքեկում, Ալմա-Աթայում, Երեւանում եւ Մինսկում, որտեղ ամեն ինչ նոր է ձեւավորվելու: Նմանապես՝ Եկատերինբուրգ եւ Խաբարովսկ քաղաքներում, որտեղ Վաշինգտոնը մտադիր է հիմնել հյուպատոսություններ՝ Ուրալին եւ Արեւելյան Սիբիրին սպասարկելու համար:

Մյուս կողմից, ամերիկյան պետքարտուղարությունում արդեն իսկ սկսել են քննարկել դիվանագիտական տարբեր պաշտոնների համար թեկնածուների ցուցակը, նրանց համար նախատեսել լեզվի եւ տեղանքի ուսումնասիրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, նյութական նախահաշիվներ պատրաստել: Արդեն իսկ նախքան ԽՍՀՄ-ի լուծարվելը, պետքարտուղարությունը առանձնացրել էր 28 դիվանագետների՝ տարբեր հանրապետություններում որպես հյուպատոս ու ներկայացուցիչ պատրաստվելու համար:

Նոր դեսպանների նշանակման հարցով զբաղվում է պետքարտուղարի առաջին տեղակալ՝ Լոուրենս Իգլբերգերը, որ առաջարկելիք թեկնածուներին Սենատին կներկայացնի նախագահ Բուշը:

Մյուս կողմից, ըստ մեր ստացած տեղեկությունների, Հայաստանի իշխանությունները տենդագին աշխատանքի են լծվել ոչ միայն ամերիկյան, այլեւ մյուս երկրների դեսպանությունների համար շենքային եւ այլ հարմարություններ գտնելու նպատակով: ■

Լեւոն Տեր-Պետրոսյանը նախատեսում է

Նախագահը հայտարարեց, որ Հայաստանի արտաքին քաղաքական կուրսը նախատեսում է նորմալ հարաբերություններ բոլոր պետությունների եւ, առաջին հերթին, մոտակա հարեւանների, մասնավորապես Թուրքիայի եւ Իրանի հետ:

«ԻՖ»-ի թղթակցին տված հարցազրույցում նա հաղորդեց, որ Թուրքիայի եւ Իրանի հետ հարաբերությունները ակտիվացնելու նպատակով վերջերս լուրջ աշխատանք է տարվել, **«որը, դատելով այդ երկրների կառավարական շրջանակների մոտ առաջացած հետաքրքրությունից, արդեն տալիս է իր դրական արդյունքները»:**

Խոսելով Մ. Գորբաչովի հրաժարականի մասին, Լ. Տեր-Պետրոսյանը նշեց, որ Գորբաչովի համար **«այժմյան քաղաքական կառուցվածքներում տեղ չգտնվեց, քանի որ նրա դիրքորոշումը Միության պահպանման վերաբերյալ տարբերվում էր հանրապետությունների դիրքորոշումից»:**

Խոսելով Հայաստանի կառավարության նոր կազմի մասին, Տեր-Պետրոսյանը հաղորդեց, որ նախարարների խորհրդում կան դեռ 10 թափուր տեղեր, որոնց կեսը կլրացվի մինչեւ տարեվերջ: ■

Ազատ արձակվեցին վրաց ընդդիմության երեք ղեկավարները

Ինչպես հաղորդեցին Թբիլիսիի անկախ լրատվական աղբյուրները, դեկտեմբերի 27-ի առավոտյան ընդդիմությանը աջակցող ազգային գվարդիականները Թենգիզ Կիտովանիի գլխավորությամբ ազատ արձակեցին ՊԱԿ-ի շենքում կալանքի տակ գտնվող Ազգային-դեմոկրատական կուսակցության ղեկավար Գեորգի Չանթուրիային, կինովավերագրող Գեորգի Խաինդրավային եւ պրոֆեսոր Ջաբա Իոսելիանիին: Ինչպես հաղորդեց Վրաստանի Ազգային-դեմոկրատական կուսակցության Մոսկվայի մշտական ներկայացուցիչ Գեորգի Զումբաձեն, ՊԱԿ-ի աշխատակիցները, այդ թվում ղեկավարությունը, ինչպես նաեւ ՆԳՆ անցել են ընդդիմության կողմը: Մեկուսարանից ազատ արձակվեց նաեւ կուսակցության քաղաքական քարտուղար Մամուկա Գեորգաձեն: Ընդդիմադիրները ազատ էին արձակել ՊԱԿ-ի աշխատակիցների հետ դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած բանակցությունների արդյունքում: Մինչեւ բանակցությունները Թենգիզ Կիտովանիի գվարդիականները մտադիր էին հարձակվել քննչական մեկուսարանի վրա: Սակայն Ազգային-դեմոկրատական կուսակցության ղեկավար Գ. Չանթուրիան հայտարարեց, որ եթե նույնիսկ գվարդիականները գրավեն մեկուսարանը, նա խցիկից դուրս չի գա:

Մոսկվայում Վրաստանի կառավարության մշտական ներկայացուցչության մամուլի քարտուղար Նոդար Ախալաձեն հայտարարեց, թե ներկայացուցչությունն ստացել է այդ լուրը, սակայն այդ փաստի պաշտոնական հաստատումը կամ հերքումը Թբիլիսիից չի ստացվել: Նա ասաց նաեւ, որ իրավիճակը մնում է լարված, կառավարական տան մոտ շարունակվում է գնդակոծությունը:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ի կողմից Վրաստանի անկախության ճանաչումը շատ անսպասելի էր Գամսախուրդիայի հակառակորդների համար: Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերը մինչ այդ քննադատել էր Վրաստանում եւ Ադրբեջանում ստեղծված իրավիճակը, հասկացնելով, թե ԱՄՆ-ը չի շտապի այդ հանրապետությունների անկախությունը ճանաչելու եւ նրանց օգնություն ցուցաբերելու գործում:

Որոշ փորձագետներ այդ հայտարարությունը կապում են հետագայում Թբիլիսիում տեղի ունեցած դրամատիկ իրադարձությունների հետ: Վաշինգտոնում հավանաբար այս իրավիճակում անհրաժեշտ գտան իրենց մոտեցումը «Վրաստանի խնդրի» նկատմամբ դարձնել ավելի հավասարակշիռ եւ ճանաչել անկախությունը, չնայած նույնիսկ իրավիճակի անորոշությանը: ■

Լուսանկարը՝ ԱՐՄԵՆՊՐԵՍ

Մինսկը պատրաստվում է ընդունել

Ինչպես հաղորդում են Մինսկից, Բելառուսի մայրաքաղաքը պատրաստվում է ընդունել բարձրաստիճան հյուրերին: Ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները նրանց արդյունավետ աշխատանքի համար: Շատերի կարծիքով, կայանալիք խորհրդակցությունը պետք է ԱՊԸ-ի հետագա գործունեության լուրջ փորձաքարը հանդիսանա:

Արդեն Մինսկ են ժամանել նախկին Խորհրդային Միության հանրապետությունների եւ արտասահմանի լրագրողները: Այստեղ անհամբերությամբ են սպասում Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը՝ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, որին էլ պատկանում է ընկերակցության ստեղծման գաղափարի առաջնությունը:

Վրաստանի մասնակցությունը առայժմ հարցականի տակ է: Անկախ պետությունների ղեկավարների խորհրդակցությունը կկայանա ճիշտ այն օրը՝ դեկտեմբերի 30-ին, երբ 1922 թվականին կազմավորվեց ԽՍՀՄ-ը:

«Սնարք»

Մեղրիով գնացքներ չեն անցնում

«Մեղրիի շրջանում, որտեղ դեկտեմբերի 16-ին արտակարգ դրություն եւ պարետային ժամ էր մտցվել, համեմատական հանգիստ է», այդ մասին «ԻՖ»-ի թղթակցին էր հաղորդել Մեղրիի շրջխորհրդի նախագահ Ենոք Անդրեասյանը:

Ըստ նրա, ադրբեջանական կողմը պատրաստակամություն է հայտնել չարգելել գնացքների հոսքը մինչեւ Նորաշեն կայարան, սակայն հայ երկաթուղայինները հրաժարվում են սպասարկել գնացքները այդ տեղամասում՝ վախենալով ադրբեջանցիների հարձակումներից: Արդյունքում, ոչ մարդատար, ոչ էլ բեռնատար գնացքները Մեղրիի այդ տեղամասով չեն անցնում: Մինչդեռ, Հայաստանը այդ ճանապարհով ստանում է իր բեռների 80 տոկոսը: ■

Մենք կկորցնե՞նք Սեւանը

«Աղքատ ժողովուրդը մաքուր մրցույթի իրավունք չունի» արդեն թեւավոր դարձած արտահայտությանը երեւի շուտով կգումարվի մեկ ուրիշը, որ աղքատ ժողովուրդը՝ տվյալ դեպքում մենք, նաեւ Սեւանա լիճն ունենալու իրավունք չունենք...

Միանգամից վերապահում անեմ, որ իհարկե, լավ օրից չէր, որ կառավարությունը նոյեմբերի 9-ին որպես արտակարգ միջոց ժամանակավորապես էներգետիկ նպատակներով Սեւանա լճից օրեկան 2.5 մլն խմ ջուր բաց թողնելու որոշում կայացրեց: Գոյապահպանական շարժման մարտիկները այս դեպքում ստիպված էին լռել. հանրապետության վառելիքաէներգետիկ համալիրում ստեղծված ծայրաստիճան լարված պայմաններում այլ ելք չկար:

Ուրիշ հարց է, որ մի՞թե անակնկալ էին երկարատեւ շրջափակումները, մի՞թե հնարավոր չէր կանխատեսել, որ հնարավոր է նաեւ Ադրբեջանի կողմից բնական գազի դադարեցում եւ այլն: Նախկին վարչապետն իր վերջին մամուլի ասուլիսներից մեկի ավարտին լրագրողներին տարակուսած հարցնում էր, թե ինչու որեւէ մեկս հարց չտվեց, թե ինչպես է կառավարությունը նախապատրաստվել ձմռանը: Հիմա պարզ է դառնում, թե ինչպես... Պարզվում է նաեւ, որ հնարավորից 7 անգամ պակաս է մազութ պահեստավորվել (350 հազարի փոխարեն՝ 50), 4 անգամ պակաս գազ կուտակվել...

Սակայն իզուր գործ է հետողորմյան, իզուր է արձանագրելը, թե նախկին վարչապետի՞, կառավարությա՞ն, թե՞ համապատասխան վառելիքաէներգետիկ միավորումների ղեկավարների մեղքն էր ձմեռն այսքան անպատրաստ դիմավորելը: Ապարդյուն է, իրականությունն այժմ մի անուն ունի՝ արտակարգ իրավիճակ, որի դեպքում, ինչպես դառը կատակել էր թերթերից մեկը, պետք է իմանաս, թե մի բաժակ տաք ջրով ինչպես սափրվել եւ հետո այն զտելով որպես թեյ օգտագործել...

Շնորհիվ Սեւանի, գործը կարծես դրան չի հասնի: Նոյեմբերի 8-ին լճի մակարդակը 1898,14 մետր էր: Շուտով կառավարության կողմից սահմանված 2.5 մլն խ. մետրի փոխարեն, առանց բնության եւ շրջակա միջավայրի պահպանության նախարարության ու խորհրդարանի բնության պահպանության եւ բնական պաշարների օգտագործման հանձնաժողովի գիտության, Նախարարների խորհրդի կենտրոնական հանձնաժողովը իր նիստերից մեկում դեկտեմբերի 19-ի թիվ 18/31-156 արձանագրությամբ թույլատրեց Հայէներգոյին Սեւանի ջրի բացթողումները հասցնել 3.2 մլն մետրի: Որ այսպիսի որոշման համար հարկավոր էր առնվազն Նախարարների խորհրդի որոշումը՝ դեռ հարցի մի կողմն է, մյուս կողմն էլ այն է, որ որեւէն չի իրականացվում կառավարության նույն նոյեմբերի 9-ի որոշմամբ բնապահպանկոմին եւ գյուղնախարարությանը համատեղ վերապահված **«խստագույն հսկողությունը բաց թողնված ջրի խնայողաբար եւ նպատակային օգտագործման նկատմամբ»**: (Սրա պատճառը նաեւ այն է, որ նախարարություն դարձած բնապահպանկոմը դեռ կազմավորման մեջ է եւ նոր է փորձում նման հարցերի լուծման խնդրում իր վճռորոշ ձայնը բարձրացնել): Ասածս հաստատելու համար մի քանի փաստեր մեջբերեմ: Լճի մակարդակն արդեն իջել է 16 սմ-ով. բաց էր թողնվել 113,607 մլն խմ. ջուր: Սեւանի մակարդակն արդեն 1897,98 մ էր կազմում: Դեկտեմբերի 19-ի որոշումից հետո Սեւանի ջրի բացթողումների քանակը խիստ գերազանցեց նույնիսկ սահմանված թույլատրելի նոր քանակը եւ օրինակ, դեկտեմբերի 21-ին կազմեց 4.564 մլն խմ: Ինչպես նշում է վարչապետ Գագիկ Հարությունյանին հասցեագրված իր տեղեկանքի մեջ Հայաստանի բնության եւ շրջակա միջավայրի պահպանության նախարար Կարինե Դանիելյանը. **«Ներկայումս Սեւանա լճից բաց թողնված ջուրը էներգետիկայի համար օգտագործելուց հետո Հայաստանի տարածքում ոչ մի տեղ չի կուտակվում, այլ լցվում է Նախիջեւանի հսկա ջրամբարը»**... Ձեզ արդեն խիստ կասկածելի կամ գոնե նվազեցրած չի՞ թվում Գերագույն խորհրդի նստաշրջանում գյուղատնտեսության նախարարի տեղակալ Յուրի Ջավադյանի ներկայացրած թվական տվյալը, որ, ըստ երեւույթին, Սեւանի մակարդակը ընդամենը 80 սմ կիջնի...

... Բայց կրկնեմ սկզբում արված վերապահումը՝ միգուցե այլ ելք չկա. **«Մենք երկու քարի արանքում ենք մի կողմից «քամում» ենք Սեւանը, մյուս կողմից չենք կարող դա չանել: Ինձ թվում է, որ բացված են Հայաստանի երակները եւ արյունը հոսում է, բայց չենք կարող դրանք փակել»**, զրույցի ժամանակ ասաց խորհրդարանի անդամ Սամվել Շահմուրադյանը: Ինչպես հայտնի է, նա հարցադրումով դիմել էր Հայաստանի փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանին. **«Հնարավո՞ր չէ, արդյոք, ամբողջովին դադարեցնել Սեւանա լճի ջրային պաշարների բացթողումը՝ էլեկտրաէներգիայի ավելի արդյունավետ խնայողության, մասնավորապես հիմնարկ ձեռնարկություններում, խանութներում, հասարակական նշանակության այլ օբյեկտներում գիշերային ժամերին ապարդյուն լուսավորության խստիվ արգելման շնորհիվ»**, որին ի պատասխան տնտեսական նախարար Ռուբեն Չիֆթալարյանը հայտնեց, թե մինչեւ դեկտեմբերի վերջը հեղուկ վառելանյութի անխափան ներմուծման եւ Թուրքմենիայից գազի ստացումից հետո **«հնարավոր կլինի ամբողջությամբ դադարեցնել էներգետիկ նպատակներով ջրի բացթողումները»**...

Ուրեմն հուսանք եւ սպասենք: Այսօր առանց 5.5 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիայի, որ ստացվում է Սեւանի հաշվին (հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի 17 տոկոսը) միգուցե կործանվի ամբողջ էներգետիկ համակարգը եւ անգամ ամենակենսական կարիքների՝ հաց թխելու եւ այլնի համար էներգիա չբավարարի... Բայց վա՞ղը: Միգուցե այս տարի Սեւանը «չմահանա», բայց եթե այս ամենը դարձյա՛լ կրկնվի, եթե քամու ուժի, արեւի ջերմության ու էներգիայի այլ աղբյուրների որոնման վերաբերյալ խոսակցությունները միայն մամուլում պահպանվեն, եթե էներգետիկ համակարգի զարգացման եւ հանրապետության էներգապահովման հիմնադրույթ չստեղծվի, եթե շուրջամյա խնայողության տնտեսական ու վարչական միջոցների ծրագիր չմշակվի, եթե Սեւանի ճակատագրի խնդիրները միայն նախարարների առանձնասենյակների փակ դռների հետեւում շարունակվեն լուծվել, եթե...

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Հայաստան ժամանեց Եւրախորհրդարանի տրամադրած կաթի փոշու 50-րդ բեռնատարը

Դեկտեմբերի 25-ին, երեկոյան, Հրազդան հյուրանոցում, Ֆրանսիական Կարմիր խաչի Հայաստանի գրասենյակը, որը Հայաստանի Կարմիր խաչի հետ, տնօրինում է Եւրախորհրդարանի Հայաստանի համար տրամադրած 1890 տոննանոց կաթի փոշու բաշխման աշխատանքները, Ս. Ծնունդի առթիվ կազմակերպել էր մի ընթրիք-հանդիպում, տոնելով Եւրախորհրդարանից Հայաստան հասնող կաթի փոշու 50-րդ բեռնատարի գալը:

Ներկա էին Հայաստանի առողջապահության նորաթուխ նախարար, մանկաբույժ պրն. Բաբլոյանը, իր տեղակալը, սննդարդյունաբերության նախարարությունից պրն. Աղիխանյանը, Հայաստանի Կարմիր խաչի նախագահ Աեոս Սարգսյանը եւ նրա տեղակալը՝ Ֆիլբերտ Ասատրյանը, «Սպիտակ» փրկարար ջոկատի ներկայացուցիչներ եւ այլ հրավիրյալներ:

Հարգանքի եւ երախտագիտության փոխանակված խոսքեր ասվեցին Ֆրանսիական եւ հայկական կողմերի ներկայացուցիչների միջեւ:

Մենք դիմեցինք պատասխանատուներից մեկին, որն ասաց, թե Հայաստան եկող այս կաթի փոշու 1000 տոննան պիտի բաշխվի ամբողջ Հայաստանի հիվանդանոցներին, իսկ մնացածն էլ Երեւանի կաթի գործարանին:

Միեւնույն ժամանակ պատասխանատուներին տեղեկացրինք այն բազմաթիվ ահազանգերի մասին, ըստ որոնց մի քանի պոլիկլինիկաներում, որոշ բժիշկների կողմից կաթի փոշին վաճառվում է 35–50 ռուբլով, տալով նրանց անունները եւ հասցեները: Ֆրանսիացի հյուրերը զարմանք ու զայրույթ արտահայտեցին այդ կապակցությամբ: Նրանք խոստացան, շուտափույթ կերպով պետք եղածն անել կանխելու համար այդ չարաշահումները:

Մեր ստացած լուրերի համաձայն, արդեն հետեւյալ օրը՝ դեկտեմբերի 26-ին, այս մարզում սկսվել էին խիստ ստուգումները:

Մեր սեփ. թղթ.
Րաֆֆի Հերմոն ԱՐԱՔՍ

Բոստոնում վախճանվեց պրոֆեսոր Բարունակ Թովմասյանը



Բոստոնում, որտեղ բնակվում էր վերջին տարիներին, չորեքշաբթի օրը, կարճատեւ հիվանդությունից հետո իր մահկանացուն կնքեց ազգային կուսակցական մեծագույն գործիչներից մեկը՝ պրոֆ. Բարունակ Թովմասյանը, 81 տարեկան հասակում:

Ծնվել էր 1910 թ., Թուրքիայի Բրուսա նահանգի Գյոլդաղ գյուղում: Մեծ եղեռնից հետո կարճ ժամանակ Կեսարիայի Ս. Կարապետ վանքում ապաստանելուց հետո այլ որբերի հետ տեղափոխվել է Բեյրութի մոտ Անթիլիասի ամերիկյան որբանոց: Բարձրագույն ուսումն ստացել է Բեյրութի Ամերիկյան համալսարանում, որտեղ հետագայում որպես ֆիզիկայի եւ մաթեմատիկայի դասախոս ու ֆակուլտետի դեկան ծառայել է 20 տարի շարունակ, հասցնելով հայ թե օտար բազմաթիվ մասնագետներ, որոնց մոտ շեշտված է եղել իրենց ուսուցչից փոխանցված հասարակական ծառայության ոգին:

1932 թ. անդամագրվել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը, որի Լիբանանի շրջանային վարչության հիմնադիրն է եղել եւ ատենադպիրը՝ 24 տարի շարունակ: Հիմնադիրներից է եղել նաեւ Հայ երիտասարդաց միության: 1933 թ. անդամագրվել է Ռամկավար Ազատական կուսակցության եւ հետզհետե, Լիբանանահայ գաղութի կարեւորությանը զուգահեռ, մեծ դեր կատարել կուսակցության կենտրոնական վարչության, Կահիրեից Բեյրութ տեղափոխման եւ ընդարձակման գործում: Այնուհետեւ, 30 տարի շարունակ, մինչեւ 1982 թ. ձեռնհասորեն վարել է ՌԱԿ կենտրոնական վարչության ատենապետի պաշտոնը, միաժամանակ դառնալով հիմնադիր-արտոնատերը «Զարթօնք» օրաթերթի, «Շիրակ» ամսագրի, ինչպես նաեւ հիմնադիրներից՝ Վահե-Վահյանի «Անի» գրական ամսագրի: Մի խումբ նվիրյալների հետ 1947 թ. հիմնել է Թեքեյան մշակութային միությունը, երկար տարիներ վարել նրա հիմնադիրների մարմնի ատենապետությունը: Սփյուռքահայության հայապահպան գործի կազմակերպիչներից՝ նա մեծ վաստակ է ունեցել ՀԲԸ Միության եւ ԹՄ Միության դպրոցական ցանցի ստեղծման գործում:

Լայն մտահորիզոնով, գործնապաշտ եւ իրապաշտ մտածողությամբ, նրբամիտ դիվանագիտական մտքով եւ վարվեցողությամբ օժտված անձ՝ 50-ական թթ-ից մինչեւ 80-ական թթ. պրոֆ. Բ. Թովմասյանը եղել է սփյուռքահայ ազգային-քաղաքական-եկեղեցական կյանքի մեծագույն դերակատարներից մեկը, կարեւորագույն դեր կատարելով սփյուռքահայ կյանքի կազմակերպման, ժողովրդավարացման, սփյուռք-հայրենիք կապերի ստեղծման եւ ամրապնդման, հայրենիքում թե սփյուռքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքների եւ հեղինակության պաշտպանության, հայ դատի հետապնդման, ցեղասպանության միջազգային ճանաչման գործում ազգային կուսակցությունների եւ քաղաքական ուժերի միջեւ համախոհություն ու միասնական ճակատ ստեղծելու գործում: 1977 թ. Շվեյցարիայում, Շ. Թորիկյանի եւ Ա. Դեմիրճյանի հետ միասին նա բանակցություններ է վարել Թուրքիայի այն ժամանակվա արտգործնախարար Ի. Ս. Չաղլայանգիլի հետ, հայ-թուրք կոնֆլիկտի շուրջ:

ՌԱԿ-ի եւ ՀԲԸՄ-ի ազգային-քաղաքական եւ բարեգործական-մշակութային գործի նվիրյալներից շատերը հանդիսանում են հանգուցյալ պրոֆեսորի սաները, նրա պատրաստած կադրերը:

Նրա վաստակը բարձր գնահատելով կրթական եւ ընկերային ծառայության բնագավառում, լիբանանյան կառավարությունը նրան պարգեւատրել է «Արժանյաց» Ա կարգի ոսկե շքանշանով, իսկ Ամենայն հայոց հայրապետ Վազգեն Ա-ն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով եւ կոնդակով՝ ազգային-հասարակական գործունեության համար:

Թաղումը կկատարվի այսօր, Բոստոնի Ս. Հակոբ եկեղեցում:

– «Ազգ» թերթի տնօրինությունը եւ խմբագրական կազմը այս տխուր առիթով խոր ցավակցություններ են հայտնում Ռամկավար Ազատական կուսակցությանը, ՀԲԸ Միությանը, ԹՄ Միությանը, հանգուցյալի մերձավորներին, գործընկերներին եւ հարազատներին:

Այս առթիվ ստացված բազմաթիվ հեռագրերից առանձնացնում ենք հետեւյալ երկուսը.

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը իր բոլոր Շրջանակներուն եւ բովանդակ անդամակցութեան անունով խոր կսկիծով կը գուժէ Կեդրոնական Վարչութեան նախկին երկարամեայ ատենապետ եւ կուսակցութեան Պատուոյ Նախագահ պրոֆ. Բարունակ Թովմասեանի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 25 Դեկտեմբեր 1991, երեկոյեան, Ուոթըրթաունի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Կուսակցութեանս մեծ երախտաւորին յուղարկաւորութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 28 Դեկտեմբեր 1991, առաւօտեան ժամը 11-ին, Ուոթըրթաունի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ:

26 Դեկտեմբեր 1991 — [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցութեան Հանրապետական Վարչութեան, ողջ անդամների եւ «Ազգ» պաշտօնաթերթի անունից խորապէս վշտակցում ենք ՌԱԿ-ի Կենտրոնական վարչութեանը եւ սփիւռքատարած անդամներին՝ վաստակաշատ քաղաքական գործիչ, սփիւռքահայ իրականութեան սիրական դէմքերից, ՌԱԿ-ի երկարամեայ առաջնորդ պրոֆ. Բարունակ Թովմասեանի մահուան առթիւ:

Մեր ցաւակցութիւնները նրա տիկնոջ եւ մերձաւորներին:

27 Դեկտեմբերի — *Երեւան*

Գրանցվեց Հ.Մ.Ը.Մ-ը

Արդարադատության նախարարությունում գրանցվել է Հայաստանի հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (Հ.Մ.Ը.Մ.), որպես սկաուտական եւ մարզական կազմակերպություն: Այդպիսով, Հ.Մ.Ը.Մ.-ն ավելի աշխույժ կարող է շարունակել իր գործունեությունը: Իհարկե, սա կազմակերպության գործունեության սկիզբը չէ, որովհետեւ անցյալ տասնամյակներին արտերկրի տարբեր հայկական գաղութներում գործում էր հիշյալ կազմակերպությունը, մարզական եւ սկաուտական աշխույժ խմբերով:

Բարի երթ ենք մաղթում Հայրենիքում վերընձյուղված ՀՄԸՄ-ին: ■

Գողացվել է

Երեքշաբթի, դեկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը, ժամը 3-ի շուրջ, Նորքի 4-րդ զանգվածի մոտակայքում, այն պահին, երբ վերջին աշխատակցին հասցնելուց հետո դեպի տուն էր վերադառնում, երեք անծանոթներ, որոնցից երկուսը զինված, մուտք են գործում «Ազգ»-ի խմբագրությանը պատկանող **M 46-48 AP** համարանիշով սպիտակ գույնի «ՌԱՖ» ավտոմեքենան եւ զենքի սպառնալիքով վարորդին ցած իջեցնելուց հետո, այն տանում անհայտ ուղղությամբ:

Տեղեկություն ունեցողներից խնդրվում է կապ հաստատել խմբագրության կամ ոստիկանության հետ:

Ադրբեջան. շրջանի երկրների հետ փոխհարաբերությունների զարգացման միտումները

Ադրբեջանը մեր հարեւանն է եւ հակառակորդը: Որպեսզի լավ պատկերացնենք մեր ապագան, անհրաժեշտ է, որ հասկանանք այնտեղ տեղի ունեցողը: Մանավանդ՝ այսօր այն դարձել է ներքին եւ արտաքին տարամետ ուժերի «կռվախնձոր», նրա ներսի քաղաքական հոսանքներն ու գործիչները ձգտում են իշխանությունը խլել կամ պահպանել, իսկ դրսից՝ շրջանի երկրները ձգտում են Ադրբեջանը դարձնել իրենց ազդեցության ոլորտ:

Այսօր ֆունդամենտալիզմի զարգացման համար Ադրբեջանում կան բավարար նախադրյալներ: Նախ, շիան, որն այսօր պատմականորեն հակված է կղերի եւ պետականության սերտաճմանը, ջիհադի կրոնապետության հաստատմանը, ի տարբերություն սուննիի, որը, կարծես թե, ավելի հակված է կրոնի եւ պետության փոխհարաբերությունները լուծելու՝ փոխզիջման ճանապարհով:

Երկրորդ՝ գնալով վատթարացող տնտեսական վիճակը, որի անկումը դեռ շարունակվում է ահագնացող թափով, մանավանդ որ Ադրբեջանում չեն իրագործվում նոր տնտեսական համակարգին, սեփականաշնորհմանն առնչվող կարեւորագույն միջոցառումները, քանի որ իշխանությունը մնացել է հին կառուցվածքների ձեռքում: Վերջինս փոքր-ինչ քողարկում է տնտեսության անկումը, սակայն նախապայմանն է անկառավարելի փուլի մոտալուտ վրահասի:

Քաղաքական համակրանքն ու տնտեսական կապերը Կենսականորեն անհրաժեշտ ապրանքների ապահովման հարցում Ադրբեջանը որոշակի հույսեր է կապում իր բնական դաշնակիցների՝ Միջին Ասիայի եւ Ղազախստանի հետ, սակայն այդ հույսերը կարող են անհիմն դուրս գալ: Բանն այն է, որ խորհրդային կայսրության փլուզումը հանգեցնում է անբնական տնտեսական համակարգի փլուզմանը, որի արդյունքը տնտեսական կապերի խզումն է անգամ միմյանց հանդեպ բարյացակամորեն տրամադրված եւ միմյանց դաշնակցել ցանկացող շրջանների միջեւ: Այդ փլուզումը պիտի հասնի իր բնական գագաթնակետին, որից հետո միայն հնարավորություն կստեղծվի նախկին տնտեսական համակարգի առանձին տարրերի օգտագործման, այն էլ ոչ ամբողջությամբ:

Այսպես, լինելով անգամ անկախացած հանրապետություն, ունենալով կառավարիչների նորացված կազմ՝ Հայաստանը պարզորոշ կերպով չի գիտակցում, թե որքան էլ գազամուղի փակումը քողարկվի ակնհայտ թշնամանքի տասը շերտի տակ, նրա բացումը, թեկուզ մեր փոխադարձ թշնամանքն էլ փարատվեր, էլի հարցական է, քանզի գազամուղների փակումը, ընդհանրապես շրջափակումները ընդհանուր տնտեսական համակարգի փլուզման անհրաժեշտ օղակներից են, եւ վաղը եւեթ առաջին շարք է մղվելու նրանց տնտեսական շահավետության խնդիրը: Որ Գրոզնու կողմից Ադրբեջանի գազի փակման վտանգը ոչ թե գեներալ Դուդաեւի կամ Ռուսաստանի մեր համակիրների նախաձեռնությունն է, այլ, ինչպես եւ Նախիջեւանին Ռուսաստանից հումք մատակարարելու հրաժարումը, ընդհանուր քայքայման գործընթացի մի օղակ, որը լոկ երանգավորվում է համակրանքի-հակակրանքի հանգամանքով: Դրան դժվար է համակերպվել, դա սթափություն է պահանջում: Երբ անգամ մեզ է դժվար, առավել եւս՝ Ադրբեջանին, ուր կառավարչակազմը դանդաղորեն է համալրվում նորովի մտածողներով: Վերջիններս էլ իրենց գործունեության առանցքն ուղղում են հների քաղաքական ճնշման հաղթահարմանը: Եւ չնայած Մութալիբովն ունի կառավարչակազմի թարմացման անհրաժեշտության գիտակցումը եւ փորձում է գործել այդ ուղղությամբ, սակայն լոկ ուղղաթիռի վթարը պատճառ հանդիսացավ նախագահի սեպտեմբերյան ընտրությունից ի վեր՝ ամենամեծ կադրային նորացման:

Դեպի ջիհա՞դ

Ֆունդամենտալիզմի թեժացման երրորդ նախադրյալն Ադրբեջանում նախորդներին սերտորեն առնչվող՝ բնակչության սոցիալական կազմի բեւեռացումն է, կենտրոնացումը երկու հիմնական բեւեռների շուրջ. աշխարհիկության եւ թուրքացման կողմնակից քչաքանակ վերնախավի, որի մեջ ընդգրկվում են եւ՛ ժողովրդավարները, եւ՛ ազգայնամոլները, եւ արագորեն «մուսուլմանացող» մեծամասնության: Առայժմ այդ բեւեռների միջեւ ակներեւ հավասարություն է, գաղափարական զինադադար. վերնախավն առիթը չի կորցնում մզկիթ այցելել, Բաքվում անց են կացվում իսլամին նվիրված միջազգային գիտաժողովներ, ուր հնչում է «աշխարհի բոլոր կրոնների միասնականության» կարգախոսը, ռուսերեն մամուլը ողողված է Աստվածաշնչից ասույթներով, եւ անգամ հեռատեսիլի հաղորդավարն ադրբեջաներեն ասում է «այն ծանր խաչը, որ իր ուսերին է կրում ազերի ժողովուրդը»... Բայց զինադադարը ժամանակավոր է: Այն կտեւի այնքան ժամանակ, մինչեւ երկու հիմնական միտումները՝ «թուրքացումն» ու խորհրդային տարիների ընթացքում ձեւականացած, սնամեջացած հավատի «վերամուսուլմանացումը» կգրավեն ժողովրդի հոգեբանության մեջ իրենց ծավալը, որից հետո վրա կհասնի պայթյունը:

Արդեն այսօր, չնայած երկուստեք հավաստիացումներին, արցախյան խնդիրը աշխարհի երկրների լայն զանգվածների կողմից ընկալվում է որպես երկու կրոնների հակամարտության խնդիր: Վաղը ջիհադի կոչը կլսվի Բաքվի մզկիթում, եւ ժողովուրդը, Արցախի վրա ջիհադի հաջողությունն ապահովելու համար, նորելուկ հոգեւոր առաջնորդների կողմից կտարվի դեպի առաջնահերթ խնդրի իրագործում՝ իշխանության գրավում եւ իսլամական հանրապետության հաստատում: Ինչպես հայտնի է, իսլամական, ինչպես եւ ցանկացած այլ հեղափոխության հեգեմոնը լումպենն է: Իսկ լումպենացումը Ադրբեջանում ընթանում է անկանգ թափով՝ եւ՛ տնտեսական, եւ՛ քաղաքական, եւ՛ հոգեւոր առումներով:

Թաքուն կայսրությունը Չի կարելի մոռանալ նաեւ, որ Ադրբեջանը, ինչպես եւ Թուրքիան, թաքուն կայսրություն է: Այստեղ կան ազգությունը տասնամյակներ շարունակ ճնշված բազմաթիվ մուսուլմաններ, որոնք սկսում են «խլրտալ» եւ գուցե հեռու չէ նաեւ նրանց ազգային զարթոնքը: Արդեն խլրտում են լեզգիները, թալիշները, կարելի է սպասել եւ այլոց արթնացմանը: Թաքնված կայսրություններում տեղի ունեցող բազմաթիվ գործընթացներ, որոնք արտաքուստ կապ կարող են չունենալ ազգային խնդրի հետ, իրականում, խորքից, առնչվում են դրան: Եւ մեծագույն կայսրության՝ Ռուսաստանի կայսրական համակարգի ահագնացող ճոճքը եւ փլուզումը կարող են իրենց ազդեցությունը թողնել, եւ անպայման կթողնեն նաեւ Ադրբեջանի վրա:

Դրանից Ադրբեջանը կարող է քանդվել, թե ոչ՝ անհայտ է: Սակայն դրանից խուսափելու միակ միջոցը, կրկին եւ կրկին, ֆունդամենտալիզմն է: Դա է այն սոսինձը, որ կմիավորի Ադրբեջանի ժողովուրդներին հանուն ընդհանուր իսլամական իդեալների: Համենայն դեպս, վերնախավն ուզած-չուզած ստիպված կլինի դիմել այդ սոսնձի օգնությանը՝ այդպիսով ավելացնելով վտանգը սեփական աշխարհիկ պետականության փլուզման:

Ազդեցությունների մրցարշավը Առայժմ Իրանն է առաջնորդում շրջանի «վերաիսլամացումը»: Առաջնորդում է, չնայած Ադրբեջանի հանդեպ իր զգուշավորությանը եւ չնայած շիայի ու միջինասիական սուննիի տարբերությանը: Բանն այն է, որ վերաիսլամացումը պիտի տեւի որոշ ժամանակ, հասնի որոշակի մակարդակի, որից հետո միայն շրջանում կվերածվի սուննի-շիա հակամարտության, որն այսօր գրեթե անհետացած է: Առայժմ իսլամն այստեղ ոչ այնքան հավատ-ապրելակերպ է, որքան՝ խաղաքարտ, քաղաքական գործիք վերնախավի ձեռքում, որ այն կարող է բանեցնել ինչպես ցանկանա, լցնել «խորհրդային մուսուլմանների» սնամեջացած անոթը ցանկացած մազհաբի հանդեպ համակրանքով կամ հակակրանքով:

Իրանի քաղաքականությունը դանդաղաշարժ է ավանդաբար, ժամանակակից քաղաքականության պահանջներին ամբողջությամբ չբավարարող պետական կառուցվածքի՝ կրոնապետության կաշկանդումի պատճառով: Սակայն շրջանում իր գերիշխանությունը հաստատելու ճիգով նա մրցում է բոլոր հավակնորդների հետ՝ եւ՛ Իսրայելի, եւ՛ Սաուդյան Արաբիայի, եւ՛ Պակիստանի, եւ՛ իր հիմնական ախոյանի՝ Թուրքիայի: Այսպես, Թուրքիայի կողմից Ադրբեջանի ճանաչումն անսպասելի էր Իրանի համար, եւ ոչ միայն նրա: Դա ժամանակին էր արված, ճիշտ քաղաքական հաշվարկի քայլ էր Թուրքիայի կողմից, որը, չցանկանալով հանդերձ շեղվել Արեւմուտքի կողմից իրեն վերապահված դերից, այնուամենայնիվ, հավակնում է որոշակի ինքնուրույնություն պահպանել մարտավարական հարցերում: Իրանը հապաղեց, քանի որ այստեղ ԽՍՀՄ հզորության եւ Ռուսաստանի հավակնությունների մասին պատկերացումները դեռեւս բավականաչափ չէին խմբագրվել եւ փլուզվել վերահաս իրադարձությունների տարափից: Սակայն հենց Իրանն էր, որ հովանավորեց Ադրբեջանի՝ Իսլամական համաժողով կազմակերպությանն անդամակցումը: Կարծես ի պատասխան դրա, Օզալն ընդգծեց, որ Թուրքիան ձգտելու է հովանավորել բոլոր մուսուլման երկրների անդամակցումը ԻՀԿ-ին, եւ ակնարկեց, որ բացառված չէ նաեւ ինքնիշխան պետություն չունեցող մուսուլման ազգերի անդամակցումը: Արդյոք նա նկատի չունե՞ր Ռուսաստանի ինքնավարությունները...

Շրջանում ազդեցության ոլորտի մեծացման մրցարշավը շարունակվում է:



Լուսանկարը՝ Մարտին ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

Եղբայրների հակամետ շահերը Այստեղ կարեւոր է ընդգծել հետեւյալ հոռի օրինաչափությունը. Հայաստանի եւ Արցախի մարտավարական շահերը որոշ առումով հակամետ են դառնում իրադրության զարգացման ցանկացած տարբերակի դեպքում: Այսպես, Հայաստանին թերեւս ձեռնտու կլիներ Ադրբեջանը տեսնել արտաքուստ եվրոպական հագուստով, ժողովրդավարացած, բանակցությունների սեղանին նստած: Օրինակ՝ երբ իշխանության գար ներկայիս սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Սակայն այդ դեպքում Ադրբեջանում անասելի ուժգնության կհասներ ազգայնականությունն ու թուրքամետությունը, որն իր ողջ թափը կուղղեր Արցախի դեմ: Եւ հակառակը, ֆունդամենտալիստ, բռնատիրական հատկություններով օժտված հարեւան ունենալը շահավետ չէր լինի Հայաստանի համար, սակայն հայտնի պարադոքսալ օրինաչափություն է, որ կրոնապետություններում երբեմն դադարում են ազգամիջյան հակամարտությունները եւ անգամ այլակրոն համայնքները հնարավորություն են ստանում խաղաղ գոյատեւման, ճիշտ է, մի շարք գուցեեւ անընդունելի պայմանների համապատասխանելու, հարմարվելու դեպքում... Սակայն այդ հնարավորությունն աչքաթող անել չարժե, գուցե այն բացատրելի է նրանով, որ կրոնապետությունը մոտ է բռնատիրությանը, իսկ վերջինս կաշկանդում է անհատի ազատությունները եւ ի թիվս այլոց՝ նաեւ ազգամիջյան վայրագության ազատությունը:

Երրորդ համաշխարհայինի սաղմը Ինչպիսի՞ն կլինի Արցախյան խնդրի հետագա ճակատագիրը: Անհնար է կանխագուշակել, որեւէ շոշափելի արդյունքի կհասցնի՞ արդյոք ԼՂՀ դիվանագիտական ճանաչման ծրագիրը, սակայն կա մի իմպերատիվ, խաղաղության հաստատման իմպերատիվը: Գուցե դա տեղի ունենա միջազգային կազմակերպությունների եւ նրանց զինված ուժերի միջամտությամբ, գուցե այդ դերում հանդես գան Ռուսաստանի կամ նոր Ընկերակցության կամավորական զորամիավորումները: Սակայն այդ միջամտության շնորհիվ պիտի տեղի ունենա պատերազմի բռնի դադարեցում, իրադրության սառեցում, հայաթափության կասեցում, որին կարող է հետեւել բանակցությունների անվերջ սեղանը... Համենայնդեպս, կարելի է պնդել, որ հայաթափման գործողությունները չեն օժանդակի ոչ Թուրքիան, ոչ Իրանը: Երկուսն էլ շահագրգռված կլինեն իրենց միջնորդությունն առաջարկելու խնդրի լուծման ուղիները փնտրելիս, քանի որ դա ազդեցության լավագույն ուղիներից է, ընդ որում, Թուրքիայի ճիգերը՝ Արցախում խաղաղություն հաստատել, ավելի փութկոտ կլինեն:

Իսկ երբ պատերազմը չդադարի, երբ իրավիճակը մնա նույն բարձիթողի վիճակում, ինչ այսօր է, ապա Արցախի բեւեռացմանը զուգընթաց կարող է տեղի ունենալ շրջանի բեւեռացումը: Թուրքիան եւ Ռուսաստանը, որ «եվրասիական» են իրենց հայտարարում եւ ձգտում են նաեւ նստել միանգամից երկու աթոռի վրա, ստիպված կլինեն ընտրել այդ աթոռներից մեկնումեկը, իսկ դա մեծ ու փոքր տեղական պատերազմների առաջացման ուղի է, որոնք ի վերջո կարող են հանգեցնել իրոք մեծ պատերազմի... Բանն այն է, որ աշխարհը խուսափում է Արցախյան խնդիրը դիտարկել բարոյականության, մարդկային արժեքների տեսանկյունից, իսկ մենք՝ հայերս, ամեն ինչ անում ենք այդ նպատակով եւ բավական հաջողությամբ: Երբ նման մոտեցումն ընդունվի, դա, ավաղ, կարող է հանգեցնել Հյուսիսի եւ Հարավի բեւեռացմանը, քանի որ Արցախում տեղի է ունենում երկու քաղաքակրթությունների անհամատեղելի արժեքային համակարգերի բախում՝ հողային հարցի շուրջ: Սա այն տեսակի պատերազմներից է, որին ոչ ոք չի ցանկանում մասնակցել, բոլոր կողմերը խաղաղասիրաբար են տրամադրված, սակայն կամաց-կամաց, ուզած-չուզած ներքաշվում են պատերազմի մեջ, եւ երբ դա համարեն բարոյական խնդիր՝ չեն կարողանա դրանից խուսափել:

Արա ՆԵՂՈՒԼՅԱՆ
Գեւորգ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Շրջանի խնդիրների
գիտատեղեկատվական կենտրոն

Ազերիներն սպառնում են Արցախում Ծննդյան տոները վերածել սպանդի

Օրեցօր շատանում են ադրբեջանցիների զինված ստորաբաժանումները Աղդամում: Այստեղ են գտնվում Գյանջայի գունդը, Սումգայիթի գումարտակը, Բաքվի միլիցիայի գունդը: Լեռնային Ղարաբաղում նախատեսվում է լայնածավալ հարձակողական գործողություն: Որոշ ստորաբաժանումներ արդեն տեղափոխվել են Շուշիի շրջանում:

Մինչդեռ նախկին ԽՍՀՄ ՆԳՆ հատուկ նշանակության դիվիզիան եւ շրջանի պարետությունը հեռացել են Լեռնային Ղարաբաղից:

Ալմա-Աթայի հավաքից հետո իրավիճակն ավելի սրվեց: Ադրբեջանի նախագահ Մութալիբովը, համոզվելով, որ այդ հավաքում ոչ մի կառուցողական որոշում չընդունվեց Ղարաբաղի վերաբերյալ, ավելի ուժեղացրեց ճնշումը: Նա լայնածավալ գործողություններ սկսեց ամբողջ ԼՂՀ տարածքում: Ներկայումս Արցախում, հիմնականում Ստեփանակերտում, գտնվում են մոտ 1000-1500 ներքին զորքերի ծառայության զինվորներ: Երբ ամբողջ Ադրբեջանի տարածքում ազերիները բռնագրավում էին նախկին Խ. Միության զինմիավորումների զենքը, իսկ Աղդամում շրջապատել էին անդրկովկասյան բանակի զինամթերքի պահեստը, Ստեփանակերտում հայերը ստիպված զինաթափեցին ներքին զորքերի մի քանի ջոկատների, որպեսզի կարողանան թշնամուն դիմակայել: Վերջինս շահարկվեց համամիութենական մամուլում եւ ադրբեջանական լրատվական կենտրոնների կողմից, առանց բացելու փակագծերը:

Իսկ Արցախում իսկական պատերազմ է: Ամեն օր նոր զոհեր են լինում: Ավդուռում (Մարտունու շրջան) 5 անմեղ երեխաներ, որոնցից ամենամեծը 14 տարեկան էր, Քարագլխում (Հադրութի շրջան) հրկիզված գյուղ, բռնագաղթվածներ, 6 պատանդ, զոհեր եւ վիրավորներ: Ավերվում են Ստեփանակերտը, Ասկերանը, Շահումյանը, Մարտակերտը եւ Արցախի սահմանամերձ գյուղերն ու բնակավայրերը:

Ադրբեջանական հրոսակները սպառնում են Ծննդյան տոները վերածել իսկական սպանդի մի բուռ քրիստոնյա արցախցիների համար:

Մյուս կողմից, Ադրբեջանը մտահոգված է նրանով, թե ինչպես է ԱՄՆ-ը գնահատում Ադրբեջանի քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում: Այս մասին ասվում է Ադրբեջանի արտգործնախարար Հուսեյն Սադիխովի՝ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերին հղված նամակում:

Նամակի համար առիթ էր հանդիսացել Բեյքերի ելույթը ԱՄՆ-ի Պրինստոնի համալսարանում, երբ նա, ըստ Ադրբեջանի, արտահայտել էր պրոհայկական դիրքորոշում:

Հ. Սադիխովի կարծիքով, Ադրբեջանն արդեն չորս տարի է հարձակման է ենթարկվում Հայաստանի կողմից: Դա էր ազգային զինյալ ուժեր ստեղծելու պատճառը: Նախարարը հույս հայտնեց, որ Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը կճանաչվի ԱՄՆ-ի կողմից: Նա հաստատեց, որ հանրապետությունը պատրաստ է զարգացնել իր հարաբերությունները համաշխարհային հանրության անդամ-երկրների հետ իրավահավասարության հիման վրա՝ ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն եւ հրավիրեց ԱՄՆ-ի պետքարտուղարին տեղում ծանոթանալու իրադրությանը:

■

Ամբողջ իշխանությունը ինտելեկտին

Զարգացող անցումային հասարակությունների համար ահեղ վտանգ, ոչ միշտ բուժելի հիվանդություն է բյուրոկրատիայի խնդիրը: Այն բնորոշվում է որպես **«առանձնահատուկ խումբ, որ ունենում է եկամուտների յուրացման անհամեմատ մեծ բաժին՝ պետական միջոցների եւ արտասահմանյան օգնության առանց հսկողության եւ լիակատար տնօրինման շնորհիվ»** (Ֆ. Ռիգս):

Բյուրոկրատիայի խնդիրը իր բազմակողմանիությամբ հանդերձ ունի մի այլ կարեւորագույն հատկություն: Հատկապես անցումային, զարգացող հասարակություններում **«զանգվածների մասնակցությունը քաղաքականությանը առաջ է անցնում քաղաքական կազմավորումների զարգացումից, որոնք կարող էին հավասարակշռել հասարակության տարբեր շերտերի շահերի իրականացումը եւ ազատված միջոցներին տալ առավել նպատակահարմար ուղղություն: Դա առաջացնում է անկայունություն եւ քաոս»** (Ս. Հանթինգտոն):

Ելքը հասարակական կազմակերպությունների զարգացման արագացմամբ է պայմանավորվում, որն իր հերթին նշանակում է ուժեղ բյուրոկրատիայի ստեղծում: Մեր իրական կյանքը երեւի թե այն փաստի լավագույն ապացույցն է, որ Հայաստանի Հանրապետությունը, տվյալ բնորոշման համաձայն, հենց անցումային, զարգացող հասարակություն է:

Բոլոր զարգացող հասարակություններն էլ անցումային շրջանում կանգնում են Սցիլլայի եւ Խարիբդայի հակասության առաջ. նրանք պետք է անցնեն երկու կրակի միջով. մի կողմից՝ առանց ուժեղ բյուրոկրատիայի նրանք գոյատեւել չեն կարող,- մյուս կողմից էլ այդ բյուրոկրատիան արգելակում է զարգացումը:

Այսպիսով, ակնհայտ է, որ բյուրոկրատիան պետք է ծառայի հասարակությանը, այսինքն՝ լինի արդյունավետ: Դրան լավագույնս **«կարելի է հասնել միայն բյուրոկրատիայի նկատմամբ ժողովրդական հսկողության շնորհիվ, որը հնարավոր է միայն ժողովրդավարական իրավունքների զարգացման առկայությամբ»**:

Ետեւից հասնողի մեր դրությունը մեզ տալիս է զգալի առավելություն. առջեւից գնացողների սխալներն իմանալու առավելությունը, եթե, իհարկե, լինենք այնքան խելոք, որ հասկանանք **«Խելոքը դաս է առնում ուրիշի սխալներից, հիմարը՝ իր»** ասացվածքը: Հենց այն փաստը, որ ետեւից հասնողներից մենք առաջինը չենք, մեզ պետք է ուժ տա:

Եւ հենց այդ առումով մենք ուզում ենք ուժեղ ու արդյունավետ բյուրոկրատիայի ձեւավորման եւ նրա «ձեւի» պահպանման կոնկրետ մեխանիզմները շոշափել:

Պատմությունը մեզ տալիս է բազմաթիվ օրինակներ, երբ որպես բարձրագույն նպատակների եւ հատկությունների կրող ստեղծված կազմակերպությունները, շատ արագ կերպով ձեւափոխվել եւ դարձել են սկզբնականի հակադարձը: Եւ, իհարկե, **«նոր տիպի կուսակցությունը»**՝ մեր ժամանակների **«խելքը, պատիվն ու խիղճը»** բոլորովին էլ առաջինն ու վերջինը չէր: Դրանք շատ են, սկսած կրոնական-քրմական կազմակերպություններից, վերջացրած հետպատերազմյան շրջանում զարգացող երկրներում կառավարող բյուրոկրատիայով: Սակայն մեր նորագույն պատմությունը տվել եւ տալիս է օրինակների այնպիսի առատություն՝ յուրաքանչյուրիս անձնական փորձով հագեցած, որ ուղղակի հիմարություն կլիներ բացասական օրինակների համար «յոթ ծովից այն կողմ գնալ»:

Վերցնենք ցանկացած ընտրախավային (էլիտային) խումբ՝ ԳԱ, կուսակցական, տնտեսական նոմենկլատուրա (այսուհետեւ նման տիպի խմբերը կանվանենք «նոմենկլատուրա»): Ի՞նչն է դրանցում ամենաբնորոշը: Դա նոր անդամների ընտրությունն է, հների՝ իսկական անդամների կողմից: Այստեղ արդեն գործում է այս օրինաչափությունը. եթե նոմենկլատուրայի անդամներից «վատերը» չեն հեռացվում առաջինը, ապա նրանք ավելի հաճախ են հանդես գալիս կադրային առաջարկություններով:

Այստեղից երեւում է, որ նախկինում բոլոր ասվածներն ունեն վիճակագրային բնույթ, սակայն հաշվի առնելով դա, խոսքը գնում է հենց օրինաչափության մասին:

Բացասական օրինակ: Մեզ մոտ ներդրված ատեստացիայի կարգը: Բոլորին է հայտնի, որ այն պետերին ոչ ձեռնտու եւ անհարմար գիտաշխատողներից «ազատվելու» օրինական հնարավորություն տվեց: Քանի որ այն կառուցված էր պարզ ու բոլորին հասկանալի սկզբունքի հիման վրա՝ «վերադասը միշտ իրավացի է»:

Հիմա հակառակ օրինակը: Իդեալական օրինակը սպորտն է, նույնիսկ մեր պայմաններում, քանի որ նրան հատուկ է մրցակցությունը: Վերցնենք ցանկացած խաղարկային մարզաձեւ: Ինչպե՞ս են կազմավորվում խմբերը: Կարելի՞ է պատկերացնել, որ բարձրագույն խմբի նորեկները առաջարկվեն եւ ընտրվեն բարձրագույն լիգայի խաղացողների քվեարկությամբ: Ի՞նչ կլինի այդ դեպքում: Կընդունեն ոչ թե «վտանգավոր անդամներին» դուրս մղելու ընդունակ ուժեղներին, այլ հարմարներին: Ինչու՞ այդ դեպքում ֆուտբոլում չմտցվեց սոցմրցության սիստեմը: Երեւի այն պատճառով, որ այդպիսի ֆուտբոլը ոչ ոքի չէր հետաքրքրի: Այլ խոսքով ասած, գոյություն ունի կողմնային դատավոր՝ հանդիսատես, որը ստիպում է ողջ համակարգին, չնայած հայտնի թերություններին (պայմանավորված ոչ ոքի, դատավորի կաշառք եւ այլն), հիմնականում աշխատել լավագույնի հայտնաբերման ճանապարհով: Ոչ ոք չի կարող հրաժարվել, որ, փաստորեն, բարձրագույն խմբում խաղում են հիմնականում լավագույնները: Այս համակարգը հոյակապ աշխատում է այն մարզաձեւերում, որտեղ հաղթողը որոշվում է կոնֆլիկտի լուծման՝ խաղի անցկացման եղանակով: Այս սկզբունքով սկիզբ է առնում խաղային մոդելավորումը, որը, օրինակ, ԱՄՆ-ում դարձել է ոչ միայն գիտական դիսցիպլին, այլ քաղաքական մշակույթի կարեւորագույն մաս:

Այս համակարգի զարգացման շատ լավ օրինակ է շախմատը: Չնայած, այն նույնպես «կոնֆլիկտային» մարզաձեւ է, այնուամենայնիվ, կոչումների համակարգը (վարպետ, գրոսմայստեր եւ այլն) բավականին կոպիտ է: Արդեն 20 տարի է սկզբնականին զուգահեռ գործում է պրոֆեսոր Էլոյի ռեյտինգային համակարգը: Այդ համակարգը այնքան ճիշտ է հաշվարկում շախմատիստի ուժը, եւ այնքան ճիշտ է նշանակում ռեյտինգը, որ, փաստորեն, բոլոր մրցումներում վերին տեղերը բաշխվում են մասնակիցների ռեյտինգին համապատասխան: Օրինակ՝ ամենաբարձր ռեյտինգը Կասպարովինն է, իսկ երկրորդ տեղում Կարպովն է: Կարող է հարց առաջանալ. «Ինչու՞ են այդ դեպքում անցկացվում մրցումներ»: Հենց նրա համար, որ ռեյտինգային ցուցակում շարժում լինի՝ մրցումների հետ դրական հակադարձ կապի շնորհիվ:

Այլ կերպ ասած, **դրական հակադարձ կապի գոյությունը նոմենկլատուրայի ձեւավորման ու համալրման համար անհրաժեշտ է:**

Շեղում: *Ստալինը դա հրաշալի էր հասկանում, եւ պարբերաբար «քաղհանում» իր նոմենկլատուրան իր՝ «ստալինյան», բարբարոսական, ասիական մեթոդներով, որտեղ հիմնական սկզբունքը ոչ թե այն էր, որ հանկարծ չտուժի անմեղը, այլ, որ խույս չտա մեղավորը:*

Պետք է նշել, որ խորհրդային տնտեսության արդյունավետությունը սկսել է ընկնել ոչ թե վերջին տարիներին, այլ 1956 թ.-ից, այսինքն՝ երբ վերացվեցին նոմենկլատուրայի ստալինյան «քաղհանները»: Դա եւս մի օրինակ է այն բանի, որ ինքն իրեն թողնված, առանց արտաքին ճնշման (ֆուտբոլի հանդիսատեսը) նոմենկլատուրան մշակում է պայմաններ միմիայն իր բարօրության համար:

Վերադառնալով ռեյտինգային համակարգին, հարց է ծագում. «Իսկ սպորտից դուրս այն կիրառություն գտե՞լ է»: Պատասխանն ակնհայտ է:

Վերցնենք այնպիսի՝ «մեզ մոտ հսկողության չենթարկվող» բնագավառ, ինչպիսին բժշկական սպասարկումն է: **Դրական օրինակ:** ԱՄՆ-ում լայն տարածում է գտել գնահատման համակարգը (եւ դրա համապատասխան վճարումը) բուժանձնակազմի համար: Նախատեսված ծրագրով հաշվի են առնվում գնահատականները, որը բժշկին նշանակում են գործընկեր բժիշկները, ստորադաս անձնակազմը, վերադասը եւ ամենակարեւորը՝ բուժվող հիվանդները: Առաջին հայացքից կարող է թվալ, որ գնահատականը կլինի սուբյեկտիվ (կարելի է պայմանավորվել գործընկերների հետ եւ այլն): Իմիջիայլոց, հենց այդպիսի առարկության են հանդիպում գնահատման համակարգ մտցնելու փորձերը՝ գիտաշխատողների համար:

Իմիջիայլոց, սպորտում նույնպես կա գնահատման մեթոդի օրինակ, որտեղ հրապարակայնությունը ապահովում է դատավորի (գնահատողի) անաչառությունը: Օրինակ՝ ձեւավոր չմշկասահքը, գեղարվեստական մարմնամարզությունը, մարմնամարզությունը եւ այլն: Երբեք դատավորը չի նշանակում մյուսների գնահատականից շատ տարբերվող գնահատական: Հետաքրքիր է, որ այդ դեպքերում շատ հաճախ հանդիսականները չեն համաձայնում դատավորների հետ, քանի որ նրանք մանր թերությունները չեն նկատում:

Մեզ համար էական է, որ տնտեսությունը կարող է շատ արդյունավետ զարգանալ, եթե նույնիսկ գոյություն չունենան արեւմտյան տիպի ժողովրդավարական համակարգեր, որոնք ապահովում են նոմենկլատուրայի «այլասերումից»: Դրա ապացույցն է ոչ միայն վերջերս մեզ մոտ շատ հիշվող Չիլիի օրինակը, այլեւ Հարավ-Արեւելյան Ասիայի «վագրերի» փորձը: Հիշեցնենք, որ Ճապոնիայում պառլամենտական համակարգը սկզբում իրեն շատ անզորունակ դրսեւորեց անսովոր լինելու պատճառով: Տայվանում մինչեւ վերջերս միակուսակցությունն օրենքի ուժ ուներ: Սինգապուրի եւ Հարավային Կորեայի քաղաքական համակարգերը մինչեւ վերջերս բնորոշվում էին որպես բռնապետություն: Մեր կարծիքով, մեզ պետք է ավելի մանրակրկիտ ուսումնասիրել Տայվանի օրինակը, որն ունի ընդամենը 36 հազար քառակուսի կիլոմետր տարածք, որի միայն քառորդ մասն է օգտագործելի, որի վրա ապրում է 20,9 միլիոն մարդ, եւ որը զարգանում է շատ բարդ պայմաններում (հզոր հակառակորդի՝ Չինաստանի հարեւանությունը, ահռելի ռազմական ծախսերը): Հետաքրքիր է, որ Տայվանը կառավարում է կուսակցական-պետական ապարատը: Նույնիսկ նրանց լոզունգներն են մերի նման՝ «Կուսակցությունը մեր ղեկավարն է»: Տայվանն այսօր իր շատ սահմանափակ բնական ռեսուրսներով հանդերձ ունի 82 միլիարդ դոլլար պահեստային վալյուտա, այն դեպքում, երբ հարուստ ԽՍՀՄ-ն ունի համարյա նույնքան… պարտք: Հիշենք ֆրանսիական ասացվածքը՝ **«le diable est dans les de'tailles»** («դեւը մանրուքների մեջ է»):

Մեր աշխատության ենթատեքստում այդպիսի «մանրուք» է մեզ մոտ ստեղծված կառային համակարգը, չնայած որ այդ աշխատանքը Ճապոնիայում կատարվում է մեր «կադրերը որոշում են ամեն ինչ» լոզունգի տակ: Մեզ անհրաժեշտ է օգտվել Հարավ-Արեւելյան Ասիայի օրինակներից (հատկապես Տայվանի)՝ յուրաքանչյուր պաշտոնական անձի իրավունքների սահմանափակման եւ բյուրոկրատական իշխանության «ապամոնոպոլացման» աշխատանքում: Մի խոսքով, օգտվել այն մեխանիզմներից, որոնք ապարատը «իր համար»-ից վերածում է պետական քաղաքականության արդյունավետ գործիքի, ինչպիսին էլ այն պետք է որ լինի: Տայվանում ամենուրեք ընդունված բյուրոկրատական եռյակին (օրենսդիր, կատարողական եւ դատական) կցված են նաեւ վերահսկող եւ քննության ենթարկող մարմիններ, որոնք մտնում են պետական կառուցվածքի մեջ:

Շատ հատկություններից ելնելով, ստեղծվում է այն տպավորությունը, թե Հայաստանի Հանրապետությունում սկսում է առաջանալ ժողովրդավարության պատերնալիստական (հայրական, հոգացողական) համակարգ: Այդ թեման դուրս է այս հոդվածի շրջանակներից: Սակայն պետք է նշել, որ անկախ այն բանից, թե ինչպիսի հիերարխիական կառուցվածք կառաջանա, նախագահը կգերադասի, որ իր հենակետը լինի ինտելեկտուալ: Կարծում ենք, որ մեր ընտրախավի հույսերն անհիմն չեն, թե չէ «մեզանից Պողոս-Պետրոս դուրս չի գա»:

Այս խնդիրը ստեղծում է մեկ ուրիշը: Ինչպե՞ս պետք է ընտրվի այն մտավոր ընտրախավը: Դիպլոմները, աստիճաններն ու պաշտոնները մեզ մոտ չեն բաժանվել ըստ արժանվույն, եւ գտնել իսկապես արժանիներին շատ բարդ է: Մենք հավատացած ենք, որ այդ ուղղվածությամբ մեր աշխատանքը անուշադրության չի մատնվի:

Յուրի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վլադիմիր ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Զինավաճառներն աշխուժանում են

Այն ժամանակ, երբ Միացյալ Նահանգները խաղում էին Մերձավոր Արեւելքի հաշտարարի դերը, Ֆրանսիան եւ Անգլիան ձգտում էին նոր ծավալուն պայմանագրեր կնքել այդ շրջան սպառազինություններ մատակարարելու համար:

Բուշի վարչակարգը, փորձելով աջակցել արաբ-իսրայելյան խաղաղ համաժողովին եւ դրդել Պարսից ծոցի պետությունների ներքին քաղաքական բարեփոխումների անցկացմանը, գործնականապես դադարեցրեց զենքի վաճառքը արաբական աշխարհին: Սակայն Ֆրանսիան եւ Անգլիան, որոնց զինագործական ընկերությունները շատ ավելի մեծ կախում ունեն արտասահմանյան պատվերներից, քան նրանց ամերիկյան գործընկերները, այդպիսի զսպվածություն չցուցաբերեցին: Երկու երկրների կառավարությունների եւ ընկերությունների բարձրաստիճան պաշտոնյաները զգալիորեն աշխուժացրին զենք վաճառելու իրենց ջանքերը:

Նրանք կարող են հպարտանալ նկատելի հաջողություններով: Օրինակ՝ «Բրիթիշ աէրոսփեյս Փի-էլ Սին»-ը մոտ է 5 միլիարդ դոլլարի չափով պայմանագրի կնքմանը, որի համաձայն Սաուդյան Արաբիային կվաճառվի 48 «Տորնադո» կործանիչներ, 60 «Հոք» ուսումնական ինքնաթիռներ եւ այլ տեխնիկա: Միայն մի քանի ամիս առաջ Սաուդյան Արաբիայի եւ ԱՄՆ-ի պաշտոնյաները գաղտնապահորեն կանխագուշակում էին, որ պայմանագրերը առաջին հերթին բաժին կընկնեն ամերիկացի մատակարարողներին: Սակայն այդ ժամանակից Սաուդյան Արաբիայի ղեկավարությունը մասնավոր զրույցների ժամանակ անհանգստություն էր հայտնում, թե ԱՄՆ-ի կառավարությունը մտադիր է աջակցել արաբական պետությունների զենքի մատակարարման գործարքներին:

Մինչդեռ, ֆրանսիական ընկերությունները համառորեն ձգտում են ձեռք բերել 5 միլիարդ դոլլար գումարի մեծ մասը, որը Քուվեյթը տրամադրել էր մի քանի տարիների ընթացքում իր զինյալ ուժերը հզորացնելու համար: **«Ֆրանսիան մոտ է նաեւ Արաբական Միացյալ էմիրություններին «Լեկլերկ» 100 տիպի լավագույն տանկեր մատակարարելու մասին պայմանագրի կնքմանը»**, ասում են ընկերությունների եւ Պենտագոնի պաշտոնյա անձինք: Հոկտեմբերին Ֆրանսիայի պաշտպանության նախարար Պիեռ ժոքսը ստորագրեց Արաբական Միացյալ էմիրությունների հետ ռազմական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

Ծոցի պատերազմից հետո արաբական երկրների ժամանակակից արեւմտյան զենք ձեռք բերելու «ախորժակը» զգալիորեն աճեց: Սկզբից ԱՄՆ-ը դա խրախուսում էր: Վարչակարգի աշխատակիցները չէին հրապարակում իրենց տրամադրության փոփոխությունները, սակայն մասնավոր զրույցներում հաստատում էին, որ պետքարտուղար Ջեյմս Բեյքերը եւ Բուշի ներքին շրջանակի այլ անդամներ մտահոգված են, որ զենքի վաճառքը կդժվարացնի խաղաղ ջանքերը:

«Զենք՝ չվաճառելու միակողմանի որոշումը չի փոխվի, մինչեւ որ հասարակությունը չտեսնի այն բանի ակներեւ ապացույցը, որ արտասահմանյան մրցակիցները վաճառում են զենքը մեր հաշվին», ասում է պահեստի գեներալ Հովարդ Ֆիշը:

Երբ Ծոցի պատերազմն ավարտվեց, գործարար աշխարհի եւ ԱՄՆ-ի կառավարության ղեկավարները պայմանագրերի կայուն հոսքի էին սպասում ամբողջ Մերձավոր Արեւելքում: Եւ պաշտպանության նախարար Դիք Չեյնին, եւ նրա օգնականները կանխագուշակում էին, թե ԱՄՆ-ը սերտորեն կհամագործակցի արաբական կառավարությունների հետ՝ բազմակողմանի ներքին բարեփոխումներին աջակցելու նպատակով, հզորացնելով եւ ուսուցանելով նրանց զինյալ ուժերը: Քանի որ արաբական եւ ամերիկյան զորքերն ունեն միեւնույն տեխնիկան եւ տակտիկան, ամերիկացի պաշտոնյաները գտնում էին, որ այդ շրջանի սպառազինությունների շուկայում ամերիկյան բաժինը կընդլայնվի:

Հիմա այդ ծրագրերը խափանվել են: Սաուդյան Արաբիայի ղեկավարները, ձգտելով ամրապնդել ֆունդամենտալիստական կրոնական խմբերի ներքին աջակցությունը, մերժեցին ստորագրել սպառազինությունների, այսպես կոչված, «նախնական տեղաբաշխման» մասին համաձայնագրերը: Արդյունքում, ԱՄՆ-ի գրեթե ողջ տեխնիկան վերադարձավ Եւրոպա եւ ԱՄՆ:

Վարչակարգի որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ փորձում էին խափանել զենքի վաճառքը Սաուդյան Արաբիային եւ Պարսից ծոցի այլ պետություններին, մինչեւ ներքին քաղաքական բարեփոխումների անցկացումը եւ Վաշինգտոնի հետ ռազմական համագործակցության մասին պայմանագրերի ստորագրումը: Սակայն անգլիացի եւ ֆրանսիացի մատակարարողների առկայությունը հավանաբար թույլ տվեց Մերձավոր Արեւելքի ղեկավարներին մերժել բարեփոխումների մասին առաջարկությունները, չնայած Վաշինգտոնի ճնշմանը:

Ինչ վերաբերում է Քուվեյթին, Պենտագոնը շարունակ մեղմորեն չեզոքացնում էր զենքի վաճառքի մասին նույնիսկ նախնական բանակցությունները: Հետագայում Չեյնին վավերացրեց այն ուսումնասիրումը, որը, ըստ պաշտոնյաների, ի վերջո կարող էր հանգեցնել ԱՄՆ-ի զենքի մատակարարումներին՝ առանց որեւէ փոխզիջման Քուվեյթի կողմից:

Մինչդեռ, վերջերս ֆրանսիացիները եւ անգլիացիները հանդես եկան այդ շրջանում զենքի տարածումը դադարեցնելու առաջարկությամբ: Սակայն ինչքան էլ որ խիստ լինի վերահսկողությունը, անխուսափելիորեն կլինեն սողանցքներ, որոնց միջոցով զենք կմատակարարվի: Ամերիկացի պաշտոնյաները մտահոգված են, որ հետագայում Չինաստանը կձգտի վաճառել զենքի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են հեռահար հրթիռները, որոնք մեծ սպառնալիք կհանդիսանան Իսրայելի համար: Սակայն մոտ ապագայում զենք վաճառելու ամենաեռանդուն ջանքեր կգործադրեն եւրոպացիները:

«Ուոլ-Սթրիթ ջորնըլ»

Կապիտալիզմը դարձնել բարոյական

Վաղ թե ուշ ազգային հողի վրա ծագած կրքերը կհանդարտվեն, եւ մեր ժողովրդի առջեւ իր ամբողջ սրությամբ կհառնի քաղաքա-տնտեսական հետագա զարգացման ուղին ճշտելու խնդիրը: Եւ դրանում ոչ մի տարօրինակ բան չկա, թեեւ «ոչ» ենք ասել խորհրդային սոցիալիզմին եւ բռնել ենք «շուկա» տանող ճանապարհը: Բայց խոսքն այն մասին է, որ աշխարհի զարգացած կապիտալիստական շատ երկրների բնակիչներն էլ մինչեւ այսօր չեն կարողացել վերջնականապես կողմնորոշվել իրենց սոցիալ-տնտեսական կառուցվածքների հիմնարար հարցերում: Եւ մերթ իշխանության գլուխ են անցնում «շուկայի» բնույթից բխող կանոնները արհեստականորեն ձեւափոխելու եւ կարգավորելու ամեն տեսակ քաղաքական միջամտությանը դեմ ուժերը, մերթ սոցիալական արդարության հասարակություն ստեղծելուն անվերապահորեն հավատացող ջատագովները՝ սոցիալիստներ, սոցիալ-ժողովրդավարներ…

Այժմ Հայաստանում այս երկու ուժերը առավել ցայտունորեն ներկայացնում են մեր դասական կուսակցություններից՝ առաջին դեպքում Ռամկավար-ազատականները, իսկ երկրորդը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը:

Ի վերջո, ում հետեւից կգնա մեր ժողովուրդը՝ ցույց կտա ժամանակը: Այս հարցում էական դեր կխաղան նաեւ զանգվածաբար յուրացվող համապատասխան տնտեսական եւ քաղաքական գիտելիքները:

Ուշադիր կարդալով «Ամերիկա» ամսագրի այս տարվա ապրիլյան համարից հայտնի տեսաբան Պոլ ՋՈՆՍՈՆԻ թարգմանաբար ձեր դատին ներկայացվող հոդվածը, դուք որոշակի պատկերացում կկազմեք այն հասարակական հարաբերությունների հիմնադրույթների մասին, որի մուտքը Հայաստան այսօր արդեն այլընտրանք չունի: Հ. Պ.

Ներկա հարյուրամյակի ութսունական թվականները գաղափարական անջրպետ դարձան: Դրանք նշանավորվեցին շուկայական կապիտալիզմի համակարգի հզորության եւ արգասաբերության բուռն վերելքով եւ սոցիալիստական վարչահրամայական տնտեսության նկատմամբ հավատի լիակատար փլուզմամբ:

Կոլեկտիվիզմի նկատմամբ վստահության կորուստը շատ տասնամյակների որոնումների եւ անհաջողությունների գագաթնակետն էր:

Աստիճանաբար, բայց անդարձ: Այդ նույն ժամանակ կապիտալիստական աշխարհը ամբողջ թափով սլանում է առաջ, ստեղծելով մինչ այդ չտեսնված չափերի նյութական հարստություններ:

Ակնհայտ է, որ կապիտալիզմը, լինելով տարերային ուժ ոչ թե գաղափարախոսության հնարանք, մշտապես կերպարանափոխվում է, եւ մեզ տրված չէ կանխատեսելու, թե ինչպիսի ճանապարհով կգնա նրա զարգացումը հաջորդ հարյուրամյակում:

Բայց ես համարձակություն եմ վերցնում ինձ վրա կանխագուշակելու, որ մարդկությունը, ունենալով այս դարի դառը փորձը, այլեւս երբեք չի կասկածի կապիտալիզմի ստեղծարար ուժին եւ այլեւս երբեք լուրջ փորձ չի անի այն փոխելու որեւէ այլ համակարգով:

Մյուս կողմից, ստեղծված իրավիճակը հանգեցրել է լուրջ բարոյական խնդրի: Այն կարելի է արտահայտել մեկ նախադասությամբ. ինչպե՞ս կապիտալիզմի հաղթական երթին ներշնչել բարոյական ոգի: Մեզ ճշգրտորեն մի բան է հայտնի՝ նյութական արժեքների ստեղծումը անհրաժեշտ է բարեկեցության համար, բայց միայն դա չի կարող երջանկություն բերել: Չէ որ մարդը ոչ միայն մարմնական էակ է, այլեւ հոգեւոր: Եւ նա չի կարող բավարարված լինել, եթե չի զգում, որ ծառայում է բարոյական նպատակի, թեկուզեւ անկատար ու հարաբերական:

Ահա այս հարցում է, որ կապիտալիզմը խոցելի է:

Բացարձակ նպատակաուղղվածություն: Չի կարելի ասել, որ կապիտալիզմը անբարոյական է: Կապիտալիստական հարաբերություններում գործերը միանգամայն այլ դրվածք ունեն: Այն ամփոփվում է կապիտալիզմի բարոյական չեզոքության եւ «բարոյական ընտրություն» հասկացության նկատմամբ նրա անտարբերության մեջ:

Կապիտալիզմը, ինչպես եւ նրա հզորության ու արդյունավետության հիմք շուկայական համակարգը, հետապնդում է միայն մեկ նպատակ: Եւ այդ պատճառով էլ այդքան արտադրողական է: Այն կույր է բոլոր այլ գործոնների՝ դասակարգային ու ռասայական պատկանելության, մաշկի գույնի, կրոնի եւ սեռի, ազգության եւ համոզմունքների, չարի եւ բարու նկատմամբ: Ակնբախորեն եւ անսխալ արձագանքելով շուկայական բոլոր խթաններին, նա նյութապաշտ է, անկիրք եւ զերծ է մարդկային հատկություններից:

Բայց մենք այսուհետ այլ ընտրություն չունենք, բացի կապիտալիզմի, որպես նյութական բարիքների արտադրության գլխավոր միջոցի, ընդունումից եւ պետք է ձեռնամուխ լինենք այս համակարգի սահմաններում բարոյական արժեքների ստեղծման գործընթացին:

Ես ասում եմ «ձեռնամուխ լինենք», սակայն որոշ իմաստով այդ ճանապարհով ենք գնում արդեն 200 տարի՝ օրենքներ ֆաբրիկաների, հանքերի մասին, օրենքներ մենաշնորհների եւ առեւտրի մասին: Բոլոր նմանօրինակ անհաշիվ օրենսդրական ակտերը ստեղծվել են նրա համար, որ թույլ չտան մարդկային ընչաքաղցությանը այլանդակելու շուկայական համակարգը:

Բայց կապիտալիզմին բարոյական նպատակաուղղվածություն տալու ցանկացած փորձ սպառնում է փլուզել շուկայական մեխանիզմը: Օրինակ, նյութական հավասարության հասնելու համար, վերաբաշխման եւ եկամուտների չափով կտրուկ աճող հարկերի միջոցով կապիտալիզմի օգտագործման ցանկացած փորձը շրջափակում է նրա գլխավոր շարժիչ ուժի՝ վաստակելու ազդակի ճանապարհները, որի արդյունքում ավելի շուտ ըստացվում է համընդհանուր աղքատություն:

Կամ, եթե փորձենք կապիտալիզմի՝ համակարգում մենեջմենտի առանձնաշնորհների եւ արհմիութենական արտոնությունների հավասարակշռության ուղիով վերաբաշխել իշխանությունը, ապա դրա արդյունքը կլինի կամ ձեռներեցության ոգու խեղդումը, կամ համակարգի էության շահույթի անհետացումը: Որպես կանոն, տեղի է ունենում եւ մեկը, եւ մյուսը:

Մենք պետք է հաշվենք այն բանի հետ, որ շուկայական համակարգը փայլում է իր ամբողջությամբ, եթե նրան չեն խանգարում, եւ արագ տկարանում է՝ իր բնույթին հակառակ գործելու ցանկացած հարկադրանքի դեպքում:

Արդար հասարակություն: Այնուամենայնիվ, իմ կարծիքով, կապիտալիզմը եւ հասարակական քաղաքականությունը կարելի է լծել նույն լծասարքին եւ նրանց էներգիան ուղղել բարոյականության կողմը:

Թույլ տվեք նշել այդ գաղափարի իրականացման վեց հիմնական ուղիներ:

Առաջին եւ որոշ իմաստով ամենակարեւոր ուղին այն է, որ կապիտալիզմը շրջապատվի բարոյական սկզբունքների վրա հիմնված համընդգրկուն իրավական շրջանակներով: Այդ նպատակը հասանելի է միայն այն դեպքում, եթե, որպես կարեւոր խնդիրներից մեկը, ընդունվի օրենքի առաջ բացարձակ հավասարության ձգտումը, որքանով դա գործնականում հնարավոր է:

Հավասարության այդ ձեւը համապատասխանում է մարդու խորագույն պահանջներին: Իրականում մեզանից շատ քչերն են երազում նյութական հավասարության մասին, կամ էլ հավատում են, որ դա հնարավոր է, բայց մենք բոլորս էլ արդարություն ենք ցանկանում:

Արդար հասարակությունը հրապուրիչ գաղափար է եւ այս ուղղությամբ առաջընթացի, անշուշտ, կարելի է հասնել:

Օրենքի առաջ բացարձակ հավասարությունը, վերջին հաշվով, անիրականանալի է, բայց մեկնարկից մինչեւ վերջնագիծ այն պետք է միատեսակ լինի բոլորի համար:

Որքան էլ տարօրինակ հնչի, բայց կապիտալիզմը նույնպես ոչ մի տարբերություն չի դընում մարդկանց միջեւ: Այդ պատճառով է, որ անհավասարության օրինականացման ցանկացած փորձ վերածվում է շուկայական մեխանիզմին կոպտորեն խառնվելու երեւույթի, որն էլ իջեցնում է նրա արդյունավետությունը:

Օրենքի առաջ հավասարությունը ամրապնդում է կապիտալիզմի բնական ուժը: Այնպես որ, այս դեպքում բարոյական նպատակը եւ նյութական բարիքների արտադրությունը ձեռք ձեռքի տված են գնում:

Դրան հասնելը, կապիտալիզմը արդարության մեջ դնել ձգտող յուրաքանչյուր հասարակության կարեւորագույն նպատակը պետք է լինի:

Հնարավորություն աղքատների համար: Հասարակության երկրորդ խնդիրը կապված է առաջինի հետ, բայց ավելի լայն է նրանից: Դա հավասար հնարավորությունների սկզբունքն է: Մարդկային բնույթի, զարմանալի հատկություններից մեկն էլ այն է, որ բոլորս, անկախ մեր նյութական եւ սոցիալական դրությունից, օժտված ենք կիրառում փնտրող ինչ-ինչ ընդունակություններով: Եւ այն հասարակությունը, որը յուրաքանչյուրի մեջ դա կճանաչի եւ կծառայեցնի իր համար, հաստատապես կդառնա ամենաարտադրողականն ու ամենաարդարը:

Եւ այստեղ եւս կապիտալիզմն ու արդարությունը միեւնույն նպատակն են հետապնդում, քանզի կապիտալիզմը իր էությամբ ըստ արժանիքների ընտրությունն է:

Իսկ ինչպե՞ս է դա գործնականում իրականանալի: Անիմաստ է հավասար հնարավորությունների մասին խոսելը, առանց այնպիսի արմատական միջոցների ընդունման, որպեսզի բարձրորակ կրթությունը հնարավոր դառնա բոլոր նրանց համար, ովքեր կարող են դրանից օգուտ քաղել: Ես գիտեմ, որ իրականում չկա այնպիսի մի հասարակություն, որտեղ լավագույն դպրոցներն ու համալսարանները բաց լինեն ցանկացածի համար: Սկսենք նրանից, որ մարդկությունը իր ողջ պատմության ընթացքում տաղանդավոր ուսուցիչների մշտական պակաս է զգացել: Բայց մի բան է ընդունել դժվարությունները, եւ միանգամայն այլ՝ հաշտվել կրթության բնագավառում տիրող անհավասարության հետ, որն այս կամ այն ձեւով գոյություն ունի աշխարհի բոլոր երկրներում:

Իմ կարծիքով, կապիտալիզմը բարոյական դարձնելու եւ նրա հիմքի մեջ արդարություն մտցնելու ավելի լավ ուղի չկա, քան աղքատ, բայց տաղանդավոր մարդկանց համար բոլոր տեսակի եւ ցանկացած մակարդակի կրթություն ստանալու հնարավորություններ ստեղծելը: Ընդ որում, ենթադրվում է, որ ցանկացած բնագավառում ընդունակությունները պետք է փոքր տարիքից բացահայտվեն:

Այս գործը հետաձգում չի հանդուրժում, քանզի կապիտալիզմը, իր զարգացմանը համեմատ, բոլոր բնագավառներում պահանջում է աշխատողների բարձր որակավորում:

Կարճ ասած, դեպի արդար հասարակություն գնացող ճանապարհը ընկած է լուսավորության միջով: Եւ մենք որքան արագ գնանք այդ ուղիով, այնքան լավ:

Փայաբաժին բոլորի համար: Սակայն լոկ կրթության հարցում հնարավորություններ ստեղծելը բավական չէ: Պետք է լայն ասպարեզ բացել կապիտալիստական համակարգի ներսում: Համոզված եմ, որ «ժողովրդավարական կապիտալիզմը» միանգամայն իրական հասկացություն է, եւ որ մենք ի վիճակի ենք, թեկուզեւ մասնակիորեն, իրականացնելու այն:

Վերջին հիսուն տարիները ցույց տվեցին, որ այս կամ այն բնագավառի հանրայնացումը ամենեւին էլ այն ժողովրդավարական չի դարձնում: Ավելի շուտ հակառակն է լինում: Ձեռնարկության ազգայնացումը այն պետական միակառույց կորպորացիա դարձնելու կամ, այսպես կոչված, «բանվորական վերահսկողության» տակ փոխադրելու ճանապարհով, բերում է միայն նրան, որ կառավարման սանձերը ամուր կերպով վերցնում են բյուրոկրատական կամ արհմիութենական վերնախավերը:

Բայց այժմ միլիոնավոր փոքր բաժնետերերին պատկանող հասարակական կորպորացիաներ ստեղծելու հնարավորություններ են ի հայտ եկել: Աշխատուժի առջեւ լայնորեն բացելով բաժնետոմսերի ձեռք բերման հնարավորությունը, ժողովրդավարական կապիտալիզմը ճանապարհ է հարթում համատիրապետման հին, բայց դեռեւս չիրագործված գաղափարի իրականացման համար: Այն հպարտության, վստահության, մինչեւ անգամ անվտանգության զգացում է առաջացնում եւ այդ պատճառով էլ կարեւոր բարոյական գործոն է դառնում: Սա իմ **երրորդ** դրույթն է:

Այսպես կոչված «խառը տնտեսության» կարեւոր թերություններից մեկը, բայց եւ ամենից քիչ հասկանալին այն է, որ այն կորպորացիայի իր անխուսափելի ձգտմամբ հանգեցնում է կառավարության, արհմիությունների եւ խոշոր կապիտալի միջեւ եռակողմ համաձայնության: Նման դաշինքից անխուսափելիորեն դուրս է մնում մանր բիզնեսը: Սեփական գործ բացելու ձգտումը նույնքան հին է, որքան սեփական հող մշակելու ձգտումը: Դա արտահայտում է մարդու ստեղծագործական բնական ձիրը, եւ այդ պատճառով բարոյական հզոր խթանի աղբյուր է:

Մարդկանց սեփական գործի բացման համար գործնական խելացի օգնություն ցույց տալը եւ նրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը ժողովրդավարական կապիտալիզմի զարգացման, համակարգի արտադրողականության բարձրացման ու հաջողությունների ապահովման ամենալավ ուղին է: Սա իմ չորրորդ դրույթն է:

Իմ **հինգերորդ** դրույթն այն է, որ միջազգային ազատ առեւտրի եռանդուն խթանումը կհանդիսանա կապիտալիզմի բարոյական արդարացման կարեւորագույն միջոցը:

Ցանկացած տեսքով արդյունաբերության արտոնյալ բնագավառներ ստեղծող հովանավորությունը քայքայում է կապիտալիզմի արդյունավետությունը եւ անընդունելի է բարոյականության տեսանկյունից, քանի որ սպառողին զրկում է շուկայի ընձեռած «պտուղներից» օգտվելու հնարավորությունից:

Բացի այդ, սուր մրցակցությունից խուսափելու նման փորձերը անխուսափելիորեն կաշառակերության եւ խարդախությունների պատճառ են դառնում, նպաստում են նաեւ պետական բյուրոկրատիզմի եւ հենց կապիտալիզմի ամենաբացասական գծերի ի հայտ գալուն:

Արդարություն առանց սահմանների: Վերջապես իմ **վեցերորդ** դրույթը: Ինչպես հասարակության մեջ հավասար հնարավորությունները դժվար թե իրականություն դառնան առանց բարձրակարգ կրթություն ստանալու համընդհանուր գործոնի, այնպես էլ ազատ առեւտուրը գործնականում կիրառելի չի լինի, քանի դեռ զարգացած եւ աղքատ երկրների միջեւ պահպանվում են տեխնիկական եւ առեւտրական մակարդակների անհամամասնություններ:

Հին ձեւով օգնությունը այժմ լրիվ վարկաբեկված է եւ, կարծում եմ, տեղին, քանզի ինչը կարող է ավելի անհեթեթ լինել աղքատ երկրի կառավարությանը հարուստ պետության կողմից տրված դրամական օգնությունից: Այն հանգստացնում է բարեգործի խիղճը, բայց որպես կանոն ամրապնդում է անընդունակ եւ ատելի բռնակալի դիրքերը:

Միանգամայն այլ բնույթ ունի երրորդ աշխարհի եւ կոմունիզմի լուծը նետած երկրներին շուկայական կապիտալիզմի մեթոդների ուսուցման կազմակերպումը:

Ձեռներեցության հմտություններ ներարկելով, մենք մեկ հարվածով կհասնենք միանգամից մի քանի նպատակների. այդ երկրների շուկաները կբացվեն մեր ապրանքների համար, կամրապնդենք համակարգը՝ դարձնելով այն համապարփակ ու արդար, եւ, ի վերջո, մրցակցության ուժեղացման համեմատ ամբողջ աշխարհի սպառողներին կտանք ավելի էժան ապրանքներ:

Եւ նորից կապիտալիզմի համաձայնեցումը բարոյական սկզբունքների հետ լրացուցիչ առավելություններ կբերի: Իմ կողմից առաջ քաշված կանոնները կարելի է հանրագումարի բերել մեկ նախադասությամբ. այն, ինչը լավ է բարոյական տեսանկյունից, ինքնաբերաբար օգտակար է նաեւ առեւտրի համար: ■

Այցելություն Արաբական Միացյալ Էմիրություններ. հայ համայնքը

Նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 12-ը Արաբական Միացյալ էմիրություններում էր գտնվում Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի պատվիրակությունը, որի կազմում էին տարբեր արդյունաբերական հիմնարկների տնօրեններ, ձեռներեց մարդիկ: Պատվիրակության կազմում էր նաեւ լուսանկարիչ Մարտին ՇԱՀԲԱԶՅԱՆԸ: Խախտելով ավանդույթը՝ տեղեկություններ քաղել պատվիրակության ղեկավարներից, փորձեցինք Արաբական Միացյալ էմիրություններին եւ այնտեղ կազմավորված հայ համայնքին նայել լուսանկարչի աչքերով:

– Նախ, ինչպե՞ս անցավ տոնավաճառը:

– Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի «Յունիսերվիս» ֆիրմայի նախաձեռնությամբ եւ «Արիր» հայ-իրանական համատեղ ձեռնարկության աջակցությամբ Հայաստանի ձեռնարկությունները Արաբական Միացյալ Էմիրություններ էին ժամանել՝ մասնակցելու «Էքսպո-91» միջազգային ցուցահանդես-տոնավաճառին: «Արիրի» վարչության նախագահ եւ «Ասիական ինդուստրիալ գրուպ» հիմնարկության տնօրեն Ռոբերտ Կարապետյանը, որը դրա մասնակիցներից մեկն էր, պատմեց, որ դեռ 1990 թ. նոյեմբերին Հայաստանում սկսված բանակցությունները ավարտվեցին 1991-ի մայիսին, երբ «Արիր» համատեղ ձեռնարկությունը գրանցվեց, իր կազմում ունենալով «Գառնի» կարի արտադրական միավորումը, Չարենցավանի հաստոցաշինական միավորումը եւ «Վան» կոշիկի գործարանը: Էմիրություններում կազմակերպված այդ ցուցահանդեսին մասնակցեց նաեւ «Սար» հիմնարկությունը, Պեղլիսի գործարանը, Արմենքոյ համատեղ ձեռնարկությունը, Արմէլեկտրոմաշ եւ Արմէլեկտրոմոտոր միավորումները: Ցուցահանդեսի բացման արարողությանը մասնակցում էր նաեւ Շարժա քաղաքի առեւտրական պալատի նախագահ, ԱՄԷ-ի առեւտրական պալատի փոխնախագահ շեյխ Նոհմանը, որը ոչ միայն այցելեց 110 քմ զբաղեցնող հայկական տաղավարը, այլեւ եղավ բացօրյա հայկական խոհանոցում, որը կազմակերպել էր «Կարս» ռեստորանը: Նրա եւ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Աշոտ Սարգսյանի զրույցում բարձր գնահատականի արժանացան հայկական ցուցանմուշները եւ մեծ ափսոսանք հայտնվեց, որ ուղարկված բեռները տեղ չեն հասել եւ մնացել են Թուրքիայում: Փաստորեն, տոնավաճառում չցուցադրվեցին կտորի, լուսամփոփների, հաստոցների, խաղալիքների շատ նմուշներ, տաղավարը ձեւավորվեց խմբի հետ բերված «Գառնի» արտադրական միավորման համազգեստներով, տրիկոտաժե գործվածքներով, կոշիկի, պեղլիսի ցուցանմուշներով եւ հայկական հուշանվերներով, ինչպես նաեւ իմ անձնական լուսանկարներով, որոնք արտացոլում էին հանրապետության կյանքը: Եւ չնայած այդ անբարեպատեհությանը, կնքվեցին երկու մեծ գործարքներ. «Գառնի» արտադրական միավորումը պատվիրվեց իրականացնել 72 հազար բանվորական համազգեստի արտադրություն, իսկ «Տոսպ» արտադրամասը 2 մլն տղամարդու շապիկներ՝ 1 մլն 800 հազար դոլլար ընդհանուր արժողությամբ:

Ցուցահանդեսն անցավ բարձր մակարդակով եւ հայկական պատվիրակությունն արժանացավ նաեւ շնորհակալագրի:

– Այժմ, հայ համայնքի մասին.

– Հայտնի է, որ Արաբական Միացյալ Էմիրությունները կազմավորվել են 20 տարի առաջ, դեկտեմբերի 2-ին՝ միավորելով յոթ էմիրություններ. Աբու-Դաբի, Դուբայ, Շարժա, Էլ-Ֆուժարա, Ումմ Էլ-Գույվեն, Աջման եւ Ռաս Էլ-Խայմա: ԱՄԷ-ի նախագահը 1971 թ.-ից ի վեր Զայեդ բեն Սուլթան Ալ Նահյան է, որի օրոք Էմիրությունները շնորհիվ ֆինանսական մեծ ներդրումների եւ նավթարդյունաբերության զարգացման, հասան անհավատալի հաջողությունների ու ծաղկման:

Այժմ Էմիրություններում ապրում է մոտ 2000 հայ: Նրանք հիմնականում ապրում են ցրված, բայց կան կենտրոններ, որտեղ ձեւավորվել են փոքրիկ համայնքներ: Աբու-Դաբիում 350–400 հայ կա, Շարժայում մոտ 1000: Հայերը եկել են մոտ 15 տարի առաջ, հիմնականում՝ Պարսկաստանից, Սիրիայից, Իրաքից, Լիբանանից:

Աբու-Դաբիի համայնքային կյանքի կենտրոնը հայկական Սահակ-Մեսրոպ միօրյա դպրոցն է, ուր հաճախում են 40–50 երեխա: Դպրոցի հիմնադիր տնօրեն Վարդան Ինգիլիզյանը հայ ժողովրդի պատմության եւ կրոնի հմուտ գիտակ էր եւ ամեն ինչ անում էր հայկականությունն ու հոգեւոր զարթոնքը վառ պահելու համար: Ամեն ուրբաթ հայ երեխաները հավաքվում են հնդկական դպրոցում, որն այդ օրը տրամադրվում է հայերին եւ երեք տարբեր խմբերում սկսվում են կրոնի, հայոց լեզվի ու գրականության, հայ ժողովրդի պատմության դասերը: Ավելի մեծ թվով՝ մոտ 85 երեխա էին այցելում Շարժա քաղաքի հայկական միօրյա դպրոցը: Դպրոցի տնօրեն Վիգեն Գլընճյանը ներկայացնելով տեղի հայ համայնքը, ուրախությամբ ասաց, որ մոտ 250 ընտանիք կա, իսկ դպրոցը գործում է արդեն 13 տարի, ուր սովորում են 3-ից մինչեւ 15 տարեկան հայ մանուկներ: Մանկավարժների թիվը հասնում է 14-ի, բայց նրանք էլ մասնագետներ չեն, ուղղակի հասարակական կարգով աշխատում եւ օգնում են դպրոցին: Թե դպրոցների տնօրենները, եւ թե մանկավարժները հիմնականում խնդրում էին Հայաստանից գրականություն ուղարկել: Եղած դասագրքերը բերված էին սփյուռքի զանազան գաղթօջախներից եւ ոչ միայն չէին բավարարում, այլեւ ունեին թարմացվելու եւ բարելավվելու կարիք:

Միօրյա դպրոցներից զատ գործում են նաեւ Աբու-Դաբիի Ազգային վարչությունը եւ Հյուսիսային Էմիրությունների Ազգային վարչությունը, որի ատենապետը բիզնեսմեն Պետրոս Ասլանյանն է: Ընդհանրապես, տեղի հայերը գոհ են իրենց ապրելակերպից, իշխանությունների վերաբերմունքից, սակայն միշտ նշում են, որ հայրենիքի կարոտ ունեն, Հայաստանից ստացվող տեղեկությունների պակաս: Նրանք չեն հաշտվում Էմիրություններում մշտապես մնալու մտքի հետ, քանի որ նրանցից շատերը եկել են դրամ վաստակելու եւ այնուհետեւ հետ վերադառնալու: Բացի այդ, ըստ ԱՄԷ-ի օրենքի, օտարերկրացիներին, ինչ ազգի էլ նրանք պատկանեն, արգելվում է Էմիրությունների տարածքում անշարժ գույք ձեռք բերել: Այսինքն հող գնելու, տուն կառուցելու իրավունք չունեն: Վարձով ինչքա՞ն ուզում են՝ կարող են ապրել: Երեւի թե միակ հայ մարդը մի լուսանկարիչ էր, որը թույլտվություն էր ստացել տուն կառուցելու: Բնիկները՝ արաբները, որոնք երկրի բնակչության 20 տոկոսն են կազմում, միայն վայելում են Էմիրությունների հարստությունն ու եկամուտները: Հիանալի մաքրություն է տիրում բոլոր քաղաքներում: Տեղացի հայերն էլ հպարտությամբ էին նշում, որ երկրի կառուցմանը մասնակցել են նաեւ իրենք եւ ԱՄԷ-ը հիմա դարձել է հարուստ ու զարգացած պետություն:

– Իսկ ինչ վիճակում է հայ համայնքի հասարակական, քաղաքական, եկեղեցական կյանքը:

– Քաղաքականությամբ, կարելի է ասել, գրեթե չեն զբաղվում: Միակ հուսադրող փաստը, որ բոլորը նշում էին, դա Անկախ Հայաստանի հռչակումն է, ինչը հնարավորություններ կբացի բոլորի համար՝ գալ Հայաստան, հիմնել ժամանակակից արտադրություն եւ զարգացնել հայրենիքի արդյունաբերությունը: Սպասում են, թե երբ կընդունվի երկքաղաքացիության մասին օրենք, որը կըհեշտացնի իրենց գործունեությունը:

Օրինակ, երկաթագործական գործարանի տնօրեն Ջոն Վահանյանը, որը զբաղվում էր երկաթե բազմազան իրերի, տնակների արտադրությամբ, պատրաստակամություն հայտնեց համագործակցելու Հայաստանի հետ: Նույնը առաջարկեց նաեւ բնիկ իրաքցի ճարտարապետ Դավիթ Մովսիսյանը, որը Անգլիայի ճարտարապետական համալսարանը ավարտելուց հետո, վերադարձել էր Էմիրություններ եւ մեծ աշխատանք ծավալել: Նրա նախագծով կառուցված հսկայական շուկան (սուպերմարկետը) ԱՄԷ-ի կողմից ներկայացվել էր Հարվարդի ամենամյա մրցույթին: Նա կառուցել էր մի փոքրիկ մզկիթ, տարբեր հուշարձաններ էր վերանորոգել, ձեւավորել այգիներ ու հյուրանոցներ: Այժմ մեծ ցանկություն ուներ աշխատել նաեւ Հայաստանում:

Կամ 44-ամյա Ժորժ Ղադիմյանը 1984-ին Շարժայի Էմիրության Զեիդ գյուղաքաղաքն էր եկել Պարսկաստանի Թեհրան քաղաքից, երկու տարի անց սկսել է զբաղվել գյուղատնտեսությամբ՝ հիմնականում ելակի արտադրությամբ: Նրա վերցրած տարածքը զբաղեցնում է 25 հեկտար: Սկզբնական շրջանում վերցրել է 8 հեկտար, հետո իր արաբ ու պարսիկ գործընկերների օգնությամբ հասցրել է 25 հեկտարի եւ հիմնադրել «Միրաֆ» գյուղատնտեսական ընկերությունը: Այժմ արտադրում են ոչ միայն ելակ, այլեւ սալաթ, տարբեր տեսակի պոմիդորներ, գազար, պղպեղ, սեխ, մոտ քսան տեսակի բանջարեղեն: Ընդհանուր համախառն արտադրանքը տարեկան հասնում է 1700 տոննայի: Կեսը վաճառում է Էմիրություններում, մյուս մասը վաճառում է Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում եւ Հեռավոր Արեւելքում՝ Ճապոնիայում եւ Ավստրալիայում: Ցանկություն ունի տարեկան ելակի արտադրությունը 250 տոննայից հասցնել 500-ի: Վաճառում է դեկտեմբերի 15-ից մինչեւ մայիսի 15-ը: Նրա ցանկություններից մեկն այն էր, որ իր նման Արարատյան դաշտավայրի հայրենակիցներն էլ 180 օր աշխատեն եւ ստանան նման բարիքներ: Իհարկե, մեծ սիրով ուզում է ելակի արտադրություն հիմնել նաեւ Հայաստանում, բայց դրա համար պահանջվում է ժամանակ եւ պայմանավորվածություն:

Ինչ վերաբերում է եկեղեցական կյանքին, ապա հայկական եկեղեցի չկա: Հայերը հաճախում են Շարժայի եւ Աբու-Դաբիի հնդկական քրիստոնեական եկեղեցիները, իսկ տարվա մեջ 3–4 անգամ, երբ կատարվում են մեծ ծեսեր, հրավիրում են արտասահմանի հայ հոգեւորականների: Զգացվում էր, որ կրոնի ազդեցությանը եւ նշանակությանը մեծ տեղ էր տրվում, հատկապես դպրոցներում: Հայերը զբաղված էին գրեթե բոլոր ասպարեզներում. ոսկերչություն, նավաշինություն, առեւտուր, ճարտարապետություն, բժշկություն, ոչ կառավարական հիմնարկներ եւ այլն: Եւ ամենակարեւորը, նրանց համախմբում էր հայկականությունը եւ միասնական հայրենիք ունենալու գաղափարը:

Պատրաստեց Յակոբ ԱՍԱՏՐՅԱՆԸ

ՄԱՐԶԱԿԱՆ

Հայաստանի մարզական դափնեկիրները

Արդեն ավանդույթ է դարձել, որ *«Մարզական Հայաստան»* թերթի խմբագրությունը յուրաքանչյուր մրցաշրջանի վերջում մարզական լրագրողների շնորհիվ ամփոփում է արդյունքները եւ որոշում տարվա մարզական դափնեկիրներին:

Հրապարակվել է նաեւ 1991 թվականի Հայաստանի 10 լավագույն մարզիկների ցուցակը:

1. **Մնացական Իսկանդարյան** - հունահռոմեական ոճի ըմբիշ, 2. **Իսրայել Հակոբկոխյան** - բռնցքամարտիկ, 3. **Յուրի Սարգսյան** - ծանրորդ, 4. **Իսրայել Միլիտոսյան** - ծանրորդ, 5. **Վլադիմիր Հակոբյան** - ճատրակորդ, 6. **Արտաշես Մինասյան** - ճատրակորդ, 7. **Մեսրոպ Շաբոյան** - հեծանվորդ, 8. **Երջանիկ Ավետիսյան** - ստենդային հրաձգություն, 9. **Աիդա Խալաթյան** - թենիսիստուհի, 10. **Մայիս Մաթեւոսյան** - ծանրորդ:

Հայաստանի 1991 թվականի լավագույն թիմ է ճանաչվել ճատրակի հավաքականը, որը դարձել է ԽՍՀՄ ժողովուրդների ամառային 10-րդ սպարտակիադայի փոխչեմպիոն: ■

Ինչպիսին կլինի ֆուտբոլային նոր մրցաշրջանը

Արդյոք նախկին Խորհրդային Միության բարձրագույն խմբի առաջնությունը կկայանա՞, թե ոչ: Այդ հարցին մասնակիորեն պատասխանեց գոյություն չունեցող Միության գոյություն ունեցող Ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմի հերթական նիստը: Քննարկման էր ներկայացվել նոր առաջնության նախագիծը, որին պայմանականորեն երեւի կարելի է տալ Անկախ Պետությունների Ընկերակցության առաջնություն անվանումը: Նախատեսվում է, որ առաջվա պես մրցաշարեր են կազմակերպվելու երեք խմբերով: Բարձրագույն խմբի առաջնությունում ընկերակցության բոլոր անկախ պետությունները, բացառությամբ Ուկրաինայի, իրենց ներկայացուցիչները կունենան: Ենթադրվում է, որ առաջնությանը կմասնակցեն 20–22 թիմ: Բարձրագույն խմբի ուկրաինական 5 թիմերի փոխարեն տեղերը կլրացվեն մարզական սկզբունքով: Բոլոր անկախ պետությունները, բացառությամբ Ուկրաինայի, հաստատել են մրցաշարին մասնակցելու իրենց ցանկությունը, իսկ Ուկրաինան մտադիր է անցկացնել ինքնուրույն առաջնություն:

Անկախ Պետությունների Ընկերակցության առաջնության հետ կապված բոլոր հարցերը վերջնական պատասխան կստանան հունվարի 11-ին Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահության հերթական նիստում: ■

Ամենամեծ անակնկալը

«Ասոշիէյտեդ պրես» գործակալության հարցմամբ, որին մասնակցեցին 30 երկրների մարզական լրագրողներ, առաջին անգամ որոշվեց տարվա մարզական ամենամեծ անակնկալը:

Դա ամերիկացի հանրահայտ թեթեւատլետ Կառլ Լյուիսի ռեկորդն է 100 մ. վազքատարածությունում (9.86 վրկ): Վերջինիս հայրենակից Մայք Պաուէլի հեռացատկի ֆանտաստիկ ռեկորդը (895 սմ) երկրորդ անակնկալը ճանաչվեց: Երրորդն աշխարհահռչակ բասկետբոլիստ Մեջիք Ջոնսոնի մոտ սպիդի բացիլի հայտնաբերումն է: Չորրորդ անակնկալը Մարադոնայի նարկոտիկային սկանդալն է: ■

Mobil
165
Mobil
80

Բաժինը վարում է Սուրեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Մաասթրիխում մոռացվող Թուրքիան

Դեկտեմբերի 10-ին ֆրանսիական նշանավոր LE FIGARO օրաթերթը, որը պահպանողական հակում ունի, հրատարակել է Փարիզում Թուրքիայի դեսպան Թանսուղ Բլիդայի հոդվածը «Մաասթրիխում մոռացվող երկիրը՝ Թուրքիան» խորագրով:

Թերթի երկրորդ էջում, լայն տեղ է տրվել այս հոդվածին, ուր Բլիդան գրում էր, թե *«Հռոմի համաձայնագրման օրից, մինչեւ այսօր Թուրքիան միշտ հայտարարել է «հզոր եւ միացյալ Եւրոպային» իր աջակցության մասին»:*

Հակառակ դրան, Թուրքիայի դեսպանը իր զարմանքն է հայտնում, այն բանի համար, որ *«Միացյալ Եւրոպայի համար եղած ամենավերջին ժողովը, որը տեղի ունեցավ Հոլանդիայի Մաասթրիխ քաղաքում, որեւէ մի դիմում Թուրքիային նախապես չկատարվեց, նրա կարծիքն իմանալու համար»:*

«Քանի որ, շարունակում է Թանսուղ Բլիդան, Թուրքիան կրում է իր պարտականությունների գիտակցությունը, սակայն այս պայմաններում ինչպե՞ս կարելի է, Թուրքիային որպես անդամ օտարել կազմավորվող ՄԵՊ (Միացյալ Եւրոպայի Պետություններից)»:

Մյուս կողմից, թրքական «Միլլիյեթ» օրաթերթի դեկտեմբերի 13-ի համարում հաստատում է Փարիզում Թուրքիայի դեսպանի մտավախությունները:

«Միլլիյեթ»-ի միջազգային լուրերի գլխավոր պատասխանատու, ծագումով հրեա նշանավոր լրագրող-մեկնաբան Սամի Կոհենը հանդես է եկել «Թուրքիայի համար լավ չեղավ» վերնագրով հոդվածով:

Ստորեւ, մասնակի կրճատումներով ներկայացնում ենք այն ձեր ուշադրությանը:

ՄԱԱՍԹՐԻԽ.
ԹՈՒՐՔԱՅԻ ՄՈՒՏՔԸ
ԵՎՐԱՀԱՄԱՅՆՔ
ԱՌԱՎԵԼ
ԴԺՎԱՐԱՆՈՒՄ Է

«Մաասթրիխի գագաթնաժողովում ընդունված որոշումների բնույթն այնպիսին էր, որ կարծես Եւրոպային պատրաստում էր 21-րդ դարին: Այստեղ ընդունված որոշումները, առաջիկայում կազմավորվող «Միացյալ Եւրոպայի պետություններ»-ի անկյունաքարերն էին:

Սա, որքան հաջող ժողով էր, Եւրոպայի երկրների, նույնքան էլ տխուր էր Թուրքիայի համար: Մաասթրիխի ժողովի որոշումներում, Թուրքիայի տեսակետից չկար նույնիսկ ոչ մի հույս եւ կամ որեւէ ուրախալի կետ:

Երբ Եւրոպան 1999 թ.-ից պատրաստվում է օգտագործել «միասնական դրամ», պիտի հետապնդի նաեւ միասնական քաղաքականություն, սկսած սոցիալական իրավունքներից վերջացրած արտաքին հարաբերությունների մարզում, մի հանգամանք որը բացառում է Թուրքիայի հարմարվելու հնարավորությունները այս փոփոխություններին:

Մաասթրիխում 9 երկրներ Հունաստանին ընդունեցին որպես «մշտական անդամ», իսկ Թուրքիային առաջարկվեց հազիվ «հյուր անդամ»ություն:

Այսպիսով, Հունաստանը դառնում է նաեւ ՄԵՊ-ի պաշտպանության օղակների լիիրավ տեր-տիրականը, իսկ Թուրքիան միշտ մնում է «հյուր»-ի դերում: Այսինքն, հավանական մի պատերազմում, Հունաստանը իր թիկունքում կունենա ամբողջ ՄԵՊ-ի աջակցությունը, իսկ Թուրքիան՝ ոչ մեկի:

Մաասթրիխում ընդունվեց նաեւ Անկարային հակասող մի որոշում Կիպրոսի վերաբերյալ: Հակառակ Թուրքիայի քանիցս կատարած նախազգուշացումներին, Կիպրոսի հարցը ՄԵՊ-ի կողմից ընդունվեց որպես «Եւրոպայի հարց», ինչպես պնդում էր Հունաստանը, այլ ոչ թե Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ եղած մի հարց, ինչը պնդում էր Թուրքիան:

Վերջապես Հունաստանի համար ուրիշ ուրախացուցիչ մի որոշում, որի համաձայն Եւրահամայնքի չորս հարուստ երկրները նյութական մեծ օգնություն պիտի ցուցաբերեն նույն համայնքի չորս աղքատ երկրներին, այսինքն՝ Իսպանիային, Պորտուգալիային, Իռլանդային եւ Հունաստանին:

Այս վերջինը, մինչեւ այսօր Եւրահամայնքից կարողացավ ստանալ 15 միլիարդ ամերիկյան դոլլար, որպես օգնություն:

Հիշեցման կարգով նշենք, որ Թուրքիան մինչեւ այսօր պաշտպանում էր հետեւյալ կարգախոսը եւ պատասխան սպասում:

«Մենք թուրքերս, մինչեւ այսօր Եւրահամայնքի անդամ չկարողացանք դառնալ, երկրի տնտեսության դժվարության պատճառով:

Սակայն ՄԵՊ-ը միեւնույն ժամանակ անվտանգության մի նոր կազմակերպություն պիտի լինի:

Ուրեմն, Թուրքիային, որը վաղուց արդեն ապացուցել էր պաշտպանության հարցերով ՆԱՏՕ-ի հավատարիմ անդամ լինելը, ի՞նչպես կարելի է դուրս թողնել ՄԵՊ-ից»:

Եւրոպան, շատերի կարծիքով, տվեց Թուրքիայի պատասխանը «Այո, ՄԵՊ-ը կարելի է պատկերացնել առանց Թուրքիայի»:

Պատրաստեց Րաֆֆի Հերմոն ԱՐԱՔՍԸ

Գորբաչովի սխալները

ԽՍՀՄ նախկին նախագահ Միխայիլ Գորբաչովի մերձավոր խորհրդական Գեորգի Շախնազարովը իտալական «Կորրիերե դելլա սերա» թերթին տված հարցազրույցում, խոսելով Գորբաչովի սխալների մասին, ասել է. «Տեսեք, խռովությունից հետո իրադարձությունները իներցիայով ծավալվեցին անջատողական շարժումներին, որոնք ոչ ոք չէր կարողանում հաշտեցնել: Դա էլ հենց պետության վերջնական փլուզումը որոշեց, որը ստացավ տրագիկոմիկական բնույթ: Կարելի՞ է արդյոք խոսել ամբողջ դաշնության մասին, երբ անգամ 3 հազար մարդ ունեցող ազգությունները են ինքնիշխանություն պահանջում: Գորբաչովի ներկայի խոշորագույն սխալը վերակառուցման ընդհանուր մտահղացման մեջ է. մենք տնտեսական վերափոխումից առաջ սկսեցինք քաղաքական բարեփոխումներ անցկացնել: Մենք պետք է աշխատեինք տնտեսությունում ուժեղ քաղաքական իշխանություն պահպանելով ավտորիտար իշխանության վրա»: ■

Ո՞ւմ է պատկանում սեւծովյան նավատորմը

Իրազեկ աղբյուրները հաղորդում են, որ դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ խորհրդակցություն, որի ժամանակ քննարկվում էր Սեւ ծովի նավատորմի ապագայի հարցը: Խորհրդակցությանը մասնակցում էին նախկին ԽՍՀՄ-ի ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատարի պաշտոնակատար ադմիրալ Իվան Կապիտանեցը, Սեւ ծովի նավատորմի հրամանատար, ադմիրալ Իգոր Կասատոնովը, ինչպես նաեւ Ուկրաինայի պատվիրակությունը պաշտպանության նախարար Կոնստանտին Մորոզովի գլխավորությամբ:

Ռազմածովային նավատորմի պատվիրակությունը առաջարկեց Սեւ ծովի նավատորմի մի մասը հատկացնել Ուկրաինային «նրա ափերը պահպանելու, սահմանները պաշտպանելու, դրանց օպերատիվ վիճակը պահելու համար»: Եթե այդպիսի տարբերակը, որ ըստ որոշ տվյալների, մինչ այդ համաձայնեցվել էր Ռուսաստանի ղեկավարության հետ, ընդունվեր, ապա Սեւ ծովի նավատորմի նավերի մի մասը կպատկաներ Ուկրաինային, մյուսը՝ Ռուսաստանին: Սակայն այն կտրականապես հերքվեց Ուկրաինայի ներկայացուցիչների կողմից, չնայած, որ մինչ այդ նախագահ Լեոնիդ Կրավչուկը հայտարարում էր նավերի բաժանման ծրագրերի մասին: Ուկրաինայի պատվիրակությունը տեղեկացրեց, որ հանրապետության ղեկավարությունը մտադիր է դեկտեմբերի 30-ին Մինսկում կայանալիք խորհրդակցության ժամանակ դնել նավատորմի Ուկրաինայի ենթակայության անցնելու հարցը:

Փորձագետների կարծիքով, Ռուսաստանն իրադարձությունների նմանատիպ զարգացման դեպքում վտանգում է կորցնել Սեւ ծովի իր նավատորմը:

Դեկտեմբերի 26-ին Եվգենի Շապոշնիկովը շտապ մեկնեց Ուկրաինա քննարկելու ստեղծված իրավիճակը նախագահ Լեոնիդ Կրավչուկի եւ պաշտպանության նախարար Կոնստանտին Մորոզովի հետ: Վերջինիս հրամանով Ուկրաինայում տեղակայված զորքերը դուրս էին բերվել Կենտրոնի ենթակայությունից եւ դրվել Ուկրաինայի տնօրինության տակ: ■

Ամերիկյան զինվորները կօգնեն նախկին ԽՍՀՄ-ին

ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի զինված ուժերի գծով հանձնաժողովի նախագահ Լ. Էսփին եւ ԽՍՀՄ-ին լայնածավալ կառավարական օգնություն ցուցաբերելու կողմնակից Դ. Նեգլը նամակ են ղրկել նախագահ Բուշին, որում մասնավորապես ասված է. «Մենք առաջարկում ենք, որ Եւրոպայում գտնվող ԱՄՆ-ի զինվորական անձնակազմը օգտագործվի սննդամթերքի օգնությունը ԽՍՀՄ-ի այն շրջանները հասցնելու համար, որտեղ ամենից շատ է զգացվում դրա պակասը»: Կոնգրեսականները առաջարկում են նաեւ ընդգրկել Ամերիկյան Կարմիր խաչին եւ այն հասարակական կազմակերպություններին, որոնք մասնակցում են արտասահմանյան երկրներին օգնություն ցուցաբերելուն: ■

10 տարի միջուկային զենքի ոչնչացմանը

ԽՍՀՄ ատոմային էներգետիկայի եւ արդյունաբերության նախարարության ներկայացուցիչը հայտարարեց, որ խորհրդային մերձահար միջուկային զենքի ոչնչացումը կպահանջի 10 տարի եւ 2 միլիարդ դոլլարի ծախսեր: Նա հայտարարեց նաեւ, որ ԱՄՆ-ի խոստացած 400 մլն դոլլարը, որը տրամադրվելու է օգնության կարգով, եւ նախատեսված է խորհրդային մերձահար միջուկային զենքի ոչնչացման համար, կօգտագործվի ռազմական մարտագլխիկներից հանված նյութերի պահպանման համար կառուցվող 2 համալիրներից մեկի աշխատանքների վրա: Այդ կենտրոնը պետք է գտնվի Վաշինգտոնի հետ միասնական հսկողության տակ: ■

Նոր վարկած Բախթիարի սպանության վերաբերյալ

Շահփուր Բախթիարի սպանության մեղադրանքով Բեռնի իրանական դեսպանատան աշխատակիցներից մեկի ձերբակալումից հետո Իրանի արտգործնախարարությունը չորեքշաբթի օրը հանդես եկավ հայտարարությամբ ուղղված Շվեյցարիայի կառավարությանը, որով խստորեն պահանջում է՝ անվերապահորեն եւ անհապաղ ազատ արձակել իրանցի դիվանագետին: Հայտարարության մեջ նշված է նաեւ, որ այդ փաստը հղի է անցանկալի հետեւանքներով եւ կարող է գորշ հետք թողնել երկու պետությունների հետագա հարաբերությունների վրա:

Նույն օրը Իրանի արտգործնախարարություն հրավիրված Շվեյցարիայի դեսպանատան ժամանակավոր հավատարմատարին զգուշացվեց այն մասին, որ Շվեյցարիան ոչ մի դեպքում իրավունք չունի իրանցի դիվանագետին հանձնել Ֆրանսիայի արդարադատության նախարարությանը: Արտգործնախարարության խոսնակը հայտարարեց, թե իրանցի դիվանագետի հետագա մեկուսացման համար ոչ մի պատճառաբանություն եւ բացատրություն ընդունելի չէ, իսկ հետեւանքների համար պատասխանատու է միայն շվեյցարական կառավարությունը:

Նախապես հաղորդվել էր, որ ֆրանսիական ոստիկանության երկու սպաներ Բախթիարի սպանության մեղադրանքով իրանցի դիվանագետին ձերբակալելու համար մեկնել են Շվեյցարիա: Իրանի ռադիոն նշեց, որ ձերբակալված անձը իրանական դեսպանատան աշխատակից է, սակայն հաղորդագրության մեջ ամբաստանյալի անձի մասին ոչինչ չի ասվում: Շվեյցարիայի արդարադատության նախարարությունը երեքշաբթի օրը հայտարարեց, որ մի իրանցի դիվանագետ ձերբակալվել է Բախթիարի սպանության մեղադրանքով: Նույն աղբյուրից հաղորդված տեղեկատվության մեջ նշված է նաեւ, որ ձերբակալված անձը երեք ամիս բնակվել է դեսպանատան շենքում, սակայն այդ ընթացքում չի աշխատել: Այդ հաղորդագրության մեջ նույնպես չի բացահայտվում ձերբակալվածի անձը, միայն նշվում է, որ ձերբակալման սանկցիա տրվել է Փարիզից:



Ֆրանսիայի իրանական դեսպանատունը նույնպես հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ հերքվում է Բախթիարի սպանության եւ իրանցի դիվանագետի միջեւ որեւէ կապի առնչությունը, եւ հույս է հայտնվում, որ ընթացիկ հետաքննությունը վերջնականապես կփարատի բոլոր տեսակի կասկածները:

Բեռնի իրանական դեսպանատան աշխատակցի ձերբակալումը Բախթիարի սպանության հետ կապված Իրանին վերագրվող չորրորդ ձերբակալությունն է, որոնց առնչությամբ Թեհրանը քանիցս հանդես է եկել հերքմամբ: Առաջին մեղադրյալը՝ Ալի Վաքիլի Ռադը, որի մասին Իսլամական հանրապետության ընդդիմադիր ուժերը լուրեր էին տարածել, թե թաքնվում է Շվեյցարիայի իրանական դեսպանատանը, ձերբակալվեց Ժնեւում եւ հանձնվեց ֆրանսիական կառավարությանը: Երկրորդ ամբաստանյալը՝ Մասուդ Հենդին, ըստ բազմաթիվ լրատվական գործակալությունների, Խոմեյնիի ազգականներից էր: Իսկ երրորդ ձերբակալված անձը, որի մասին նշվել էր, թե կապեր ունի իրանական հակահետախուզության հետ, մի իրանցի կին էր: Ֆրանսիական ոստիկանությունը մեկ այլ իրանցու՝ ոմն Շեյխ Աբբասի ձերբակալման վերաբերյալ նույնպես սանկցիա է տվել:

Չնայած այն բանին, որ Բախթիարի սպանության հետ կապված Իրանին վերագրվող չորրորդ անձնավորության ձերբակալումը նոր լարվածություն է ստեղծել Թեհրան-Փարիզ հարաբերություններում, Իրանի իսլամական հանրապետության արտգործնախարարությունից չորեքշաբթի օրը հայտնեցին, թե Ֆրանսիայի արտգործնախարարի Թեհրան այցելելու հարցի վերաբերյալ շարունակվում են բանակցությունները եւ Ռոլան Դյումայի այցելության օրը շուտով կճշտվի: Իրանում հրատարակվող *«Ջոմհուրի-է Էսլամի»* թերթը, չընդունելով արտգործնախարարության հայտարարությունը, նույն չորեքշաբթի օրվա համարում նշեց, որ Դյուման Թեհրան կայցելի հաջորդ չորեքշաբթի եւ ավելացրեց, որ նախատեսվում է այցելության ժամանակ ստորագրել երկու երկրների միջեւ գոյություն ունեցող ֆինանսական վեճերը կարգավորող մի փաստաթուղթ: Ավելացնենք, որ Շահփուր Բախթիարի սպանությունից հետո օրակարգից դուրս է մնացել Ֆրանսիայի նախագահի այցը Թեհրան, որը պիտի տեղի ունենար աշնանը:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ